

6

Նանա Ջափարիձե
Նանի Ծուլսիյա
Մաիա Ծիլոսանի

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ՈՒՍՈՒՑՉԻ ԳԻՐՔ

ԳՐԻՖ ՇՆՈՐՀՎԵԼ Է 2018 ԹՎԱԿԱՆԻՆ՝
ՎՐԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ



Մաթեմատիկա 6

Մաթեմատիկայի գիրքը վեցերորդ դասարանցիների համար Թբիլիսի, 2018

Հեղինակներ՝ **Նանա Ջափարիձե, Նանի Մուլախյա, Մաիա Ծիլոսանի**

Խմբագիրներ՝ **Թամար Գավաշելիշվիլի, Մարիամ Գոչիտաշվիլի**

Դիզայներ՝ **Իա Մախաթաձե**

Տեխնիկական դիզայներ՝ **Նինո Կուբլաշվիլի**

© Բակուր Սուլակաուրիի հրատարակչություն, 2018

ՄՊԸ «Բակուր Սուլակաուրիի հրատարակչություն» Աղմաշենեբեի 150, Թբիլիսի 0112
Հեռ՝ 2910954, 2911165

Էլ. հասցե՝ info@sulakauri.ge

ISBN 978-9941-30-345-6

Mathematics 6
Teacher's Book

© Sulakauri Publishing, 2018
all rights reserved.

Tbilisi, Georgia
www.sulakauri.ge

Բովանդակություն

<p>Ձեռնարկի մասին.....5</p> <p>Դասի օրինակները.....7</p> <p>I ԳԼՈՒԽ.....7</p> <p>§1. Տասնորդական կոտորակներ7</p> <p>§2. Տասնորդական կոտորակների համեմատումը8</p> <p>§3. Տասնորդական կոտորակների գումարումը8</p> <p>§4. Տասնորդական կոտորակների հանումը9</p> <p>§5. Տասնորդական կոտորակների կլորացումը10</p> <p>§6. Բազմապատկում և բաժանում 10-ի, 100-ի, 1000-ի.....10</p> <p>§7. Տասնորդական կոտորակների բազմապատկումը.....11</p> <p>§8. Տասնորդական կոտորակների բաժանումը բնական թվի վրա.....12</p> <p>§9. Բաժանում տասնորդական կոտորակի վրա13</p> <p>§10. Ուղղանկյուն գուգահեռանիստի ծավալը13</p> <p>§11. Բազմանիստների փոփոխությունը (իմբային աշխատանք).....14</p> <p>§12. Ուղղանկյուն գուգահեռանիստի մակերևույթի մակերես.....15</p> <p>II ԳԼՈՒԽ.....16</p> <p>§3. Բնական թվերի վերլուծումը պարզ արտադրիչների16</p> <p>III ԳԼՈՒԽ.....17</p> <p>§6. Սովորական կոտորակների բաժանումը17</p> <p>IV ԳԼՈՒԽ.....18</p> <p>§2 Համեմատություններ.....18</p> <p>§5. Շրջանաձև դիագրամ.....18</p> <p>Շնորհանդեսներ.....19</p>	<p>Քաղվածք «Ազգային ուսուժական ծրագրից» 20</p> <p>Աշակերտի գնահատման համակարգը .. 20</p> <p>Ակադեմիական նվաճումների մակարդակները և գնահատման համակարգը.....22</p> <p>Գնահատման գործիքներ տարրական, բազային և միջին աստիճաններում.....22</p> <p>Աշակերտի գնահատման չափորոշիչները.....23</p> <p>Որոշող գնահատման միավորների տեսակները24</p> <p>Միավորները հաշվելու կարգը..... 25</p> <p>Նոր ազգային ուսուժական ծրագրով սահմանված մաթեմատիկայի ծրագիր.....27</p> <p>VI դասարանում տարվա վերջի արդյունքները և ցուցանիշները.....27</p> <p>Ծրագրի բովանդակությունը 32</p> <p>Ուսուժական նյութի ներկայացման փուլերը և դասի պլանավորման հիմնական սկզբունքները..... 33</p> <p>Լուծումներ, նշումներ..... 35</p> <p>I ԳԼՈՒԽ..... 35</p> <p>§1. Տասնորդական կոտորակներ.....35</p> <p>§2. Տասնորդական կոտորակների համեմատումը 36</p> <p>§3-4. Տասնորդական կոտորակների գումարում-հանումը..... 36</p> <p>§5. Տասնորդական կոտորակների կլորացումը.....37</p> <p>§6. Բազմապատկում և բաժանում 10-ի, 100-ի, 1000-ի.....38</p> <p>§7. Տասնորդական կոտորակների բազմապատկումը..... 38</p> <p>§8. Տասնորդական կոտորակների բաժանումը բնական թվի վրա.....39</p> <p>§9. Տասնորդական կոտորակի բաժանումը.....40</p> <p>§10. Ուղղանկյուն գուգահեռանիստ, ծավալ..... 41</p>
--	---

§11. Բազմանիստների փոփոխություններ.....	41	§5 Փոխադարձ պարզ թվեր.....	61
§12. Ուղղանկյուն գուգահեռանիստի մակերևույթի մակերեսը.....	42	§6. Սովորական կոտորակների բաժանումը.....	62
Ինքնաստուգման թեստ	42	§7. Վարժություններ կոտորակների վերաբերյալ.....	62
I գլխի լրացուցիչ վարժություններ.....	43	§8. Լուծենք խնդիրները.....	63
II ԳԼՈՒԽ.....	45	§9. Ընդհանուր գործողություններ սովորական և տասնորդական կոտորակներով.....	64
§1. Բաժանարարներ և բազմապատիկներ	45	Ինքնաստուգման թեստ.....	65
§2. Թվերի բաժանելիությունը 9-ի և 3 -ի.....	45	III գլխի հավելյալ վարժություններ.....	65
§3. Բնական թվի վերլուծումը պարզ արտադրիչների.....	47	IV ԳԼՈՒԽ.....	67
§4. Ամենամեծ ընդհանուր բաժանարար.....	48	§1. Հարաբերություններ.....	67
§5. Բնական թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը.....	49	§2. Համեմատություն.....	67
§6. Լուծենք խնդիրները.....	49	§4. Համեմատությունների վերաբերյալ խնդիրների լուծում.....	68
§7. Կոտորակի կրճատում.....	51	§5. Շրջանաձև դիագրամ.....	69
§8. Կոտորակներն ընդհանուր հայտարարի բերելը.....	52	§7. Միջին թվաբանական.....	70
§10. Կոտորակների գումարումը և հանումը.....	53	§8. Հիմնախնդրի որոնում.....	71
§11. կոտորակի լրացումը մինչև մեկը.....	53	§9. Զուգահեռ տեղափոխում.....	73
§12. Խառը թվերի գումարում-հանում.....	54	§10. Առանցքային համաչափություն.....	73
§13. Հատվածների համեմատում.....	56	Ինքնաստուգման թեստ.....	73
§14. Բեկյալ	56	IV Գլխի լրացուցիչ վարժություններ.....	74
§16. Երկու շրջանագծերի փոխդասավորությունը.....	57	լուծումներ, նշումներ (խնդիրներ մաթեմատիկայի) սիրահարների համար.....	75
Ինքնաստուգման թեստ.....	58	Ամփոփիչ աշխատանքների օրինակներ	81
II գլխի լրացուցիչ վարժություններ.....	58	Հրահանգ SՀS -ի օգտագործմամբ վարժություններ լուծելու համար	83
III ԳԼՈՒԽ.....	59	Աշակերտի գրքի վարժությունների ճիշտ պատասխանները	85
§1. Կոտորակների բազմապատկում.....	59	Էլեկտրոնային ռեսուրսներ ուսուցչի համար	87
§3. Լուծենք խնդիրներ կոտորակների վերաբերյալ.....	59	Աղբյուրների ցանկ.....	88
§4. Բազմապատկման հաշվեկանոնը ըստ դիրքային համակարգի.....	60		

Ձեռնարկի մասին

Նպատակը

VI դասարանում մաթեմատիկայի ուսուցման հիմնական նպատակն է պատանու մոտ զարգացնել մտածելու ունակությունը, տրամաբանական և քննադատական դատողության կազմավորումը, որպեսզի նա յուրացնի մաթեմատիկայի այն «այբեննարանը», որի հիման վրա պետք է կազմավորվեն հետագա գիտելիքները:

Ուսուցչի ձեռնարկի կառուցվածքը

Ձեռնարկը բաժանված է գլուխների: Յուրաքանչյուր գլուխ բաժանված է պարագրաֆների: Դրանցից յուրաքանչյուրն ունի «տեքստեր ինքնաստուգման համար» և լրացուցիչ վարժություններ, որոնք մի կողմից, ծառայում են անցած նյութի կիրառմանը և խորը ամրապնդմանը, իսկ մյուս կողմից, այն ունակությունների կազմավորմանը, որը նրանց կնախապատրաստի մաթեմատիկայի «գեղեցկությունը», տրամաբանությունը և հետևողականությունը ընկալելու համար:

Ոչ ստանդարտ կերպով տրված խնդիրը կամ հարցը աշակերտի մոտ առաջացնում է միանշանակ վախ, եթե դա արտասովոր է իր համար: Այդ դժվարությունների հաղթահարումը աշակերտի մոտ առաջացնում է ինքնավստահություն,

հետաքրքրություն և մաթեմատիկայի հանդեպ սեր: Դա ի նկատի ունենալով,

VI դասարանի աշակերտի գրքում գետեղվել են ոչ ստանդարտ խնդիրներ:

Այն հաղթահարելու համար այլևս ջանք չեն թափի աշակերտները, քանի որ,

V դասարանում ուսուցչի ցուցմամբ նրանք լուծում էին նման խնդիրներ: Տվյալ

խնդիրները հնարավորություն են տալիս, որպեսզի ուսուցիչը ունենա աշխատելու

հնարավորություն այն աշակերտների հետ, որոնք ամբողջ դասարանի համեմատ

ավելի արագ են յուրացնում նյութը: Վերոհիշյալ խնդիրները նպաստում են

աշակերտների մոտ հետաքրքրության ստեղծմանը, քննադատական դատողության

կազմավորմանը, խնդիրների լուծման տարբեր մեթոդների ձեռք բերմանը: Նրանց

հաճախակի մասնակցությունը դասի ընթացքին կնպաստի նաև մաթեմատիկական

խմբակներում աշխատանքին (եթե դպրոցում կան նման խմբակներ), կամ

մասնակիորեն կատարում են տվյալ աշխատանքը, խմբակ չլինելու դեպքում ուսուցիչը

ինքնուրույն կարող է, կազմել նման խնդիրներ ըստ տրված օրինակների: Խնդիրները

լուծելու մեր կողմից առաջարկված տեսականը կօգնի մանկավարժին և աշակերտին,

ոչ ստանդարտ խնդիրներ լուծելու և կիրառելու փորձառության ձեռք բերմանը, որը

միանշանակ կնպաստի նրա մասնագիտական զարգացմանը:

Մեթոդիկա

Պարագրաֆի կառուցվածքը նպաստում է աշակերտին դասի ընթացքին ներգրավելու գործում: Յուրաքանչյուր պարագրաֆ սկսվում է աշակերտների համար (անհատական կամ զույգերով) հատկացված առաջադրանքով, որը լուծելուց հետո պատանին պատրաստ է նոր նյութը յուրացնել, որը հասկանալու և յուրացնելու համար անհրաժեշտ են պարագրաֆին կից «անհատական հարցերը», որոնք որոշ պարագրաֆներում մեզ հանդիպում են մի քանի տեղ (ըստ այն, թե ինչքանով է պահանջում այն պարագրաֆում տրված նյութը): Միևնույն ժամանակ, հարցերն ուսուցչին և աշակերտներին օգնում են գնահատել, թե որքանով է յուրացված այս կամ

այն թեման:

Աշակերտի գրքում բազում են տարբեր ակտիվություններ պարունակող առաջադրանքները՝ նախագծեր և գործնական աշխատանքներ:

Պարագրաֆի այս կառուցվածքը նպաստում է աշակերտների համար մատչելի դասանցկացնելուն, որտեղ ուսուցիչը միայն նյութ փոխանցողը չէ, իսկ աշակերտը պասիվ ունկնդրող:

Աշակերտը ակտիվ մասնակցում է դասի ընթացքին: Յուրաքանչյուր եզրահանգում, մեկնաբանություն ստեղծվում է աշակերտների և ուսուցչի միասնական ջանքերով: Յուրաքանչյուր գլուխ պարունակում է մեկ կամ երկու «թեստ ինքնաստուգման համար», որը ենթադրում է ոչ միայն տեքստում եղած առաջադրանքների կատարումը, այլև աշակերտի ինքնագնահատումը: Աշխատանքն ավարտելուց հետո, աշակերտներին պատվիրում ենք ըստ իրենց հայեցողության գնահատել տվյալ առաջադրանքները. օրինակ՝ «պարզ», «միջին բարդության» կամ՝ «բարդ», հաշվել, թե քանի առաջադրանք են ճիշտ լուծել (իրենց կարծիքով), քանի հարցի պատասխանի վրա են կասկածում, կազմել համապատասխան աղյուսակ, կետային կամ պունակաձև դիագրամ, այնուհետև տեսնել թեստի պատասխանները և հասկանալ, թե ինչքանով ճիշտ են գնահատել սեփական աշխատանքը: Դա կօգնի նրանց ինքնագնահատման ունակության զարգացման և սեփական տեսակետը վերագնահատելու գործում, որը շատ կարևոր է:

Ուսուցչի ձեռնարկի կառուցվածք

Ուսուցչի գրքում տրված են պարզ ցուցումներ և մեկնաբանություններ: Դասի ընթացքը ապահովված է պարագրաֆի կառուցվածքով, սակայն մանկավարժը կարող է, փոխել այն ըստ իր հայեցողության:

Ուսուցչի գրքում, տրված է նաև գնահատման համակարգը, նպատակների և արդյունքների քարտեզը, դասի սցենարներ առաջին գլխի բոլոր պարագրաֆների համար, իսկ փասցած գլուխներից՝ 1 կամ 2 պարագրաֆի համար:

Ուսուցչի գրքի վերջին մասում տրված է լրացուցիչ գրականություն, ամփոփիչ աշխատանքի նմուշներ և աշակերտի գրքում գետեղված խնդիրների/վարժությունների, այդ թվում, պատասխանների խորագիրը՝ «խնդիրներ մաթեմատիկայի սիրահարների համար» խորագրի պատասխանները:

Առաջարկում ենք, դասի ընթացքի ընդհանուր սխեման

- I – Տրված անհատական առաջադրանքը (5 րոպե);
- II – Աշակերտների կողմից տվյալ առաջադրանքների շնորհանդեսը (5-10 րոպե);
- III – Նոր նյութի ամփոփում (ուսուցիչները և աշակերտները միասին) (10-15 րոպե);
- IV – Նոր նյութի ամրապնդում, հաստատում, գրքում տրված անհատական կամ զույգերի համար հատկացված հարցերով (5-10 րոպե);
- V – Պարագրաֆում քննարկված և լուծված խնդիրների ամփոփում-ամրապնդում, հաճախ բանավեճով (10 րոպե);
- VI – Դասի ամփոփում, առաջադրանքի հանձնարարում (5 րոպե)

ԴԱՍԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿՆԵՐ

I Գլուխ

§1. Տասնորդական կոտորակներ

Ակնարկ՝ աշակերտները կտվորեն գրել թիվը տասնորդական կոտորակի տեսքով:
Աշակերտները կկարողանան.

- Որոշ թվեր գրել տասնորդական կոտորակի տեսքով
- Տասնորդական կոտորակի տեսքով գրված թիվը, ներկայացնել համապատասխան գումարելիների գումարի տեսքով

Ցուցում. պարագրաֆին տրամադրված է երկու ժամ:

I-ին ժամը՝

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը կողջունի աշակերտներին, կկարդա ցուցակը, կվերհիշեն, թե ինչ տեսքի թվեր են սովորել նախորդ դասարաններում: (5-10 րոպե)
2. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին, մտածել պարագրաֆի սկզբում տրված հարցերի շուրջ №1-2: (5 րոպե)
3. Ուսուցիչը աշակերտներին ցուցադրում է այն կոտորակային թվերի գրառումը տասնորդական կոտորակի տեսքով, որի հայտարարը պարունակում է 10-ի աստիճանները: (10 րոպե)
4. Ուսուցիչը բացատրում է տասնավորների, հարյուրավորների և այսպես շարունակ կարգերը: (5 րոպե)
5. Դասարանում քննարկում են պարագրաֆում տրված №4-6 վարժությունները: (10 րոպե)
6. Ուսուցիչը ամփոփում է դասը և հանձնարարում տնային աշխատանք №1-10: (5 րոպե)

II-ին ժամը՝

1. Ուսուցիչը ընտրում է անհասկանալի խնդիրները և դասարանի հետ միասին լուծում №11-23 վարժությունները:
2. Ուսուցիչը ամփոփում է դասը և հանձնարարում է տնային առաջադրանք №24-32 վարժությունները:

§2. Տասնորդական կոտորակների համեմատումը

Ակնարկ՝ աշակերտները կծանոթանան տասնորդական կոտորակները համեմատելու կանոնին:

Աշակերտները կկարողանան.

- Համեմատել տասնորդական կոտորակների տեսքով տրված թվերը:
- Թվային ճառագայթի վրա պատկերել տասնորդական կոտորակի տեսքով տրված թվերը
- Անվանել տրված երկու թվերի միջև գտնվող մեկ կամ մի քանի թվեր:

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների տրված հարցերին / քացատրում է անհասկանալի խնդիրները: (5-10 րոպե)
2. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին, դատողություններ անել պարագրաֆի սկզբում տրված №1 վարժության շուրջ: Այն առաջադրանքի շուրջ, որի արդյունքով կնշեն գրքում տրված եզրահանգումները: (10 րոպե)
3. Դասարանում քննարկում են պարագրաֆում տրված առաջադրանքները: (10 րոպե)
4. Դասարանում կքննարկեն №1-11 վարժությունները (15 րոպե)
5. Ուսուցիչը քննարկում է դասը և, որպես տնային աշխատանք հանձնարարում հետևյալ վարժությունները: (5 րոպե)

§3. Տասնորդական կոտորակների գումարումը

Ակնարկ՝ աշակերտները կծանոթանան տասնորդական կոտորակների գումարման կանոնին:

Աշակերտները կկարողանան.

- Հասկանալ տասնորդական կոտորակների գումարման կարգը
- Գումարել տասնորդական կոտորակները
- Հիմնավորել տասնորդական կոտորակների գումարման օրենքի ճշմարտացիությունը

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին / բացատրում է անհասկանալի վարժությունները: (5-10 րոպե)
2. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին, լուծել պարագրաֆի սկզբում տրված խնդիրը և դասարանի հետ միասին լուծում է տվյալ առաջադրանքը: (10 րոպե)
3. Ուսուցիչը աշակերտների մասնակցությամբ քննարկում է գրքում տրված №1-2 անհատական հարցերը, որի հետևանքով աշակերտները կարողանում են ձևակերպել տասնորդական կոտորակների գումարման կանոնը: (15 րոպե)
4. Աշակերտները հիշում են բնական թվերի գումարման կարգը և հիմնավորում են, որ այս կանոնները տարածվում են նաև տասնորդական կոտորակների վրա: (10 րոպե)

Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին դատողություններ անել №3-4 անհատական հարցերի շուրջ և վարժություններով ամփոփում է դասը, այնուհետև որպես տնային աշխատանք հանձնարարում է պարագրաֆի Վսացած վարժությունները: (10 րոպե)

§4. Տասնորդական կոտորակների հանումը

Ակնարկ՝ Աշակերտները կձանոթանան տասնորդական կոտորակների հանման կանոնին:

Աշակերտները կկարողանան.

- Որոշել, թե ինչքանով է մեծ մեկ տասնորդական կոտորակը մյուսից
- Հանել տասնորդական կոտորակները

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին / բացատրում է անհասկանալի վարժությունները: (5-10 րոպե)
2. Ուսուցիչը հարց-պատասխանի ռեժիմով քննարկում է է պարագրաֆի սկզբում տրված №1 վարժությունը, որի արդյունքով հիմնավորում է տասնորդական կոտորակների այունակաձև հանման կարգը: (10-15 րոպե)
3. Դասարանում քննարկում են №1-10 վարժությունները: (15 րոպե)
4. Ուսուցիչը ամփոփում է դասը և հանձնարարում է որպես տնային աշխատանք №11-24 վարժությունները: (5 րոպե)

§5. Տասնորդական կոտորակների կլորացումը

Ակնարկ՝ աշակերտները կձանոթանան տասնորդական կոտորակների կլորացման օրինակներին:

Աշակերտները կկարողանան.

Կլորացնել տասնորդական կոտորակները տրված ճշգրտությամբ:

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին, բացատրում է անհասկանալի վարժությունները: (5-10 րոպե)
2. Ուսուցիչը քննարկում է պարագրաֆի սկզբում տրված խնդիրը: (10 րոպե)
3. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին, կատարել պարագրաֆում տրված վարժությունը: (10 րոպե)
4. Աշակերտները ներկայացնում են վարժության շնորհանդեսը: (5 րոպե)
5. Դասարանում վերլուծում են պարագրաֆում տրված վարժությունը: (10 րոպե)
6. Ուսուցիչը ամփոփում է արդյունքները և հանձնարարում է տնային աշխատանք №1-10 վարժությունները: (5 րոպե)

§6 Բազմապատկում և բաժանում 10-ի, 100-ի, 1000-ի

Ակնարկ՝ աշակերտները կձանոթանան տասնորդական կոտորակի 10-ով բազմապատկման-բաժանման կարգին:

Աշակերտները կկարողանան.

- Ցանկացած թիվ բազմապատկել/բաժանել 10-ի աստիճանի:
- Կշռի կամ երկարության, փոքր չափման միավորն արտահայտել ավելի մեծ չափման միավորով: Օրինակ՝ մետրերով պատկերված մեծության արտահայտումը՝ կիլոմետրերով:

Ցուցում. պարագրաֆին տրամադրված է երկու ժամ:

I-ին ժամը

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին / բացատրում է անհասկանալի վարժությունները: (5-10 րոպե)
2. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին քննարկել պարագրաֆի սկզբում տրված №1-2 հարցերը, որից հետո աշակերտները բացատրում են տասնորդական կոտորակի 10-ով բազմապատկման կարգը: (10 րոպե)
3. Աշակերտները դատողություններ են անում №3 հարցի շուրջ և արդյունքում ուսուցչի հետ մեկտեղ բացատրում են տասնորդական կոտորակի 10n-ի բազմապատկման-բաժանման կարգը: (10 րոպե)
4. Դասարանում, հարց-պատասխանի ռեժիմով, քննարկում են պարագրաֆում տրված օրինակները: (10 րոպե)
5. Ուսուցիչը ամփոփում է արդյունքները և հանձնարարում է տնային աշխատանք՝ №1-12 վարժությունները: (5 րոպե)

II-ը ժամը՝

Ուսուցիչը վերլուծում է անհասկանալի վարժությունները, որի արդյունքում խորացնում է նոր նյութի իմացությունը և հանձնարարում է №13-27 վարժությունները (այս վարժությունների մի մասը, ըստ ուսուցչի հայեցողության, հնարավոր է լուծել դասի ժամանակ):

§7. Տասնորդական կոտորակների բազմապատկումը

Ակնարկ՝ աշակերտները կձանոթանան տասնորդական կոտորակների բազմապատկման կարգին:

Աշակերտները կկարողանան.

- Բազմապատկել տասնորդական կոտորակները
- Լուծել այնպիսի հավասարումներ, որոնք պարունակում են տասնորդական կոտորակներ
- Լուծել խնդիրներ, որտեղ կան տասնորդական կոտորակ պարունակող թվեր

Ցուցում. պարագրաֆին տրամադրված է երկու ժամ:

I-ին ժամը

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին / բացատրում է անհասկանալի վարժությունները: (5-10 րոպե)

2. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին դատողություններ անել պարագրաֆի սկզբում տրված №1-4 հետաքրքրաշարժ խնդիրների շուրջ, որի արդյունքում, հարց-պատասխանի ռեժիմով, բացատրում է տասնորդական կոտորակների բազմապատկման կարգը: (20 բուպե)
3. Քննարկում են պարագրաֆում տրված առաջադրանքը, որի հետևանքով տեսնում են, որ տասնորդական կոտորակները բազմապատկելիս գործում են բազմապատկման տեղափոխական, զուգորդական և բաշխական օրենքները: (10 բուպե)
4. Քննարկում են պարագրաֆում տրված օրինակները, որի արդյունքում ամրապնդում են արդեն ստացած գիտելիքները: (5-10 բուպե)
5. Ուսուցիչը ամփոփում է դասը և հանձնարարում №1-11 վարժությունները: (5 բուպե)

II-ը ժամը՝

№11-26 վարժությունների մի մասը դասարանում է լուծվում, իսկ մյուս մասն ուսուցիչը հանձնարարում է որպես տնային աշխատանք:

§8. Տասնորդական կոտորակների բաժանումը բնական թվի

Ակնարկ՝ Աշակերտները կծանոթանան տասնորդական կոտորակները բնական թվի վրա բաժանման կանոնին:

Աշակերտները կկարողանան.

- Տասնորդական կոտորակը բաժանել բնական թվի վրա
- Պարզեցնել տասնորդական կոտորակներ պարունակող արտահայտությունը
- Խնդիրները լուծելիս կիրառել ստացած գիտելիքները

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին / բացատրում է անհասկանալի վարժությունները: (5-10 բուպե)
2. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին քննարկել պարագրաֆի սկզբում տրված հետաքրքրաշարժ խնդիրները: (5 բուպե)
3. Խնդիրը քննարկելիս աշակերտները կհասկանան, որ լուծելու ընթացքում անհրաժեշտ է տասնորդական կոտորակը բաժանել բնական թվի վրա, որից հետո ուսուցիչը կձևակերպի համապատասխան կանոնը: (10 բուպե)
4. Աշակերտների ակտիվ մասնակցությամբ կքննարկվի գրքում ընտրված օրինակները: (10 բուպե)
5. Ուսուցիչը ձևակերպում է կոտորակը տասնորդական կոտորակ դարձնելու կարգը: (15 բուպե)

6. Ուսուցիչը ամփոփում է դասը և հանձնարարում է տնային աշխատանք՝ №1-15 վարժությունները: (5 րոպե)

§9. Բաժանում տասնորտական կոտորակի վրա

Ակնարկ՝ աշակերտները կձանոթանան թիվը տասնորդական կոտորակի վրա բաժանման կանոնին:

Աշակերտները կկարողանան.

- Ցանկացած թիվ բաժանել տասնորդական կոտորակի
- Ձևափոխել տասնորդական կոտորակ պարունակող ցանկացած արտահայտություն
- Ստացած գիտելիքները կիրառել խնդիրներ լուծելիս

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին / բացատրում է անհասկանալի վարժությունները: (5 րոպե)
2. Զույգերը սկսում են դատողություններ անել պարագրաֆի սկզբում տրված №1-2 վարժությունների շուրջ: (10 րոպե)
3. Աշակերտները ներկայացնում են խնդիրների լուծման օրինակներ: (10 րոպե)
4. Դասարանում լուծում են №1-6 վարժությունները: (15 րոպե)
5. Ուսուցիչը ամփոփում է արդյունքները և որպես տնային աշխատանք հանձնարարում է №7-20 վարժությունները: (5 րոպե)

§10. Ուղղանկյուն գուգահեռանիստի ծավալը

Ակնարկ՝ աշակերտները կձանոթանան ծավալի չափման միավորներին և ուղղանկյուն գուգահեռանիստի ծավալը հաշվող բանաձևին:

Աշակերտները կկարողանան.

- Հաշվել գծագրում պատկերված միավոր խորանարդներից կազմված պատկերի ծավալը
- Հաշվել ուղղանկյուն գուգահեռանիստի և խորանարդի ծավալը

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին / բացատրում է անհասկանալի վարժությունները: (5-10 րոպե)

2. Հարց-պատասխանի ռեժիմով քննարկվում են պարագրաֆի սկզբում տրված №1-6 հարցերը: (15 րոպե)
3. Միասնական ուժերով (ուսուցիչը և աշակերտները) անցնում են ուղղանկյուն գուգահեռանիստի, խորանարդի ծավալը հաշվող բանաձևին: (10 րոպե)
4. Քննարկվում է ծավալի չափման միավորների միջև եղած կապը: (10 րոպե)
5. Ուսուցիչը ամփոփում է դասը և հանձնարարում տնային աշխատանք: (5 րոպե)

§11. Բազմանիստների փոփոխությունները (խմբային աշխատանք)

Ակնարկ՝ աշակերտները կծանոթանան Էյլերի բանաձևին և բազմանիստների փոփոխություններին:

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին / բացատրում է անհասկանալի վարժությունները: (5-10 րոպե)
2. Ուսուցիչը բաժանում է աշակերտներին 3-4 խմբի: (15 րոպե)
3. Յուրաքանչյուր վարժության ժամանակ (1, 2, ... յուրաքանչյուր խմբից, առանձին-առանձին) գրատախտակի մոտ է գալիս մեկ աշակերտ: Հերթական, նոր հանձնարարության ժամանակ, գրատախտակի մոտ գալիս է նոր աշակերտը: Խնդրի վրա աշխատում են նաև խմբերը: Խմբի կողմից ճիշտ կերպով կատարված հանձնարարությունը գնահատվում է 1 միավոր, իսկ աշակերտի կողմից՝ 3 միավոր (ընդամենը – մեկ հանձնարարության համար խումբը կարող է հավաքել 4 միավոր): (35 րոպե)
4. Աշակերտը կգումարի միավորները և կանվանի հաղթող խումբը: (5 րոպե)

§12. Ուղղանկյուն զուգահեռանիստի մակերևույթի մակերես

Ակնարկ՝ աշակերտները կսովորեն հաշվել ուղղանկյուն զուգահեռանիստի կամ նրա ձևն ունեցող առարկայի մակերևույթի մակերեսը:

Աշակերտները կկարողանան.

- Հասկանալ, թե ինչ է նշանակում տարածական մարմնի մակերևույթի մակերես:
- Հաշվել ուղղանկյուն զուգահեռանիստի, խորանարդի մակերևույթի մակերեսը
- Մտացած գիտելիքները կիրառել և կապել առօրյա կենցաղին

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին / բացատրում է անհասկանալի վարժությունները: (5-10 րոպե)
2. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին, դատողություններ անել պարագրաֆի սկզբում տրված խնդրի շուրջ: (5 րոպե)
3. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին, աշակերտի գրքում տրված զույգերի համար հատկացված հանձնարարության համապատասխան գծել ուղղանկյուն զուգահեռանիստի փովածքը և տրված չափերը նկատի առնելով, գտնել այդ փովածքի մակերևույթի մակերեսը: Տվյալ հանձնարարությունը կատարելիս, ցանկալի է, ուսուցիչը հետևի, թե ինչպես են զույգերը կատարում այդ հանձնարարությունը և անհրաժեշտության դեպքում, նրանց տա համապատասխան ցուցումներ: (20 րոպե)
4. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին փովածքից սոսնձել ուղղանկյուն զուգահեռանիստ և արտահայտել իրենց կարծիքը, թե ինչ կարող է լինել դա և ինչի կարող է հավասար լինել զուգահեռանիստի մակերևույթի մակերեսը: (10 րոպե)
5. Աշակերտները, ուսուցչի օգնությամբ, ամփոփում են արդյունքները և կայացնում համապատասխան եզրահանգումներ: (5 րոպե)
6. Ուսուցիչը ամփոփում է դասը և հանձնարարում է տնային աշխատանք: (5 րոպե)

II ԳԼՈՒԽ

§3. Բնական թվերի վերլուծումը պարզ արտադրիչների

Ակնարկ՝ աշակերտները սովորում են թիվը վերլուծել պարզ արտադրիչների:

Աշակերտները կկարողանան.

- Վերլուծել թիվը պարզ արտադրիչների
- Ճանաչել պարզ և բաղադրյալ թվերը
- Ստացած գիտելիքները կիրառել ըստ անհրաժեշտության

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին / բացատրում է անհասկանալի վարժությունները: (5-10 րոպե)
2. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին պարագրաֆի սկզբում տրված առաջին վարժությունը, որտեղ ծառածն դիագրամի օգնությամբ տրված են արտադրիչների վերածման օրինակներ: (15 րոպե)
3. Ուսուցիչը կոնկրետ թվի օրինակով աշակերտներին ցույց է տալիս, որ նշանակություն չունի, թե սկզբից ինչ արտադրիչների կվերլուծենք թիվը, միևնույնն է արդյունքը նույնը կստանանք: Օրինակ՝ $60=6\cdot 10=15\cdot 4=2\cdot 30$: (5 րոպե)
4. Ուսուցիչը ձևակերպում է կանոնը, թե ինչ է նշանակում վերլուծել թիվը պարզ արտադրիչների: (5 րոպե)
5. Դրան հետևում են անհատական հարցերը: (5 րոպե)
6. Դասարանում վերլուծում են գրքում ընտրված խնդիրները: (10 րոպե)
7. Ուսուցիչը ամփոփում է դասը և հանձնարարում է տնային աշխատանք: (5 րոպե)

III ԳԼՈՒԽ

§6. Սովորական կոտորակների բաժանումը

Ակնարկ՝ Աշակերտները կսովորեն կոտորակների բաժանումը:

Աշակերտները կկարողանան.

- Բաժանել կոտորակները
- Գտնել անհայտ արտադրիչը, արտադրյալի և հայտնի արտադրիչի օգնությամբ
- Ստացած գիտելիքները կիրառել դասընթացների ժամանակ և իրական կյանքում

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին / բացատրում է անհասկանալի վարժությունները: (5-10 րոպե)
2. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին պատասխանել պարագրաֆի սկզբում տրված անհատական հարցերին, որտեղ նրանց կօգնի հարցերին կցված զննական նյութը: (5 րոպե)
3. Ուսուցիչը դասարանում հարց-պատասխանի ռեժիմով բացատրում է պարագրաֆում տրված հավասարումները: (10 րոպե)
4. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին, դատողություններ անել պարագրաֆում տրված 4-5 անհատական հարցերի շուրջ, որից հետո ուսուցիչը և աշակերտները միասին ձևակերպում են կոտորակների բաժանման կարգը: (10 րոպե)
1. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին լուծել պարագրաֆում տրված №6 խնդիրը և վերլուծում է պարագրաֆում լուծված օրինակները: (5 րոպե)
2. Ուսուցիչը գրատախտակի մոտ է հրավրում աշակերտներին և ըստ անհրաժեշտության օգնում է նրանց լուծել №1-6 վարժություններից մեկական օրինակ: (10 րոպե)
3. Ուսուցիչը ամփոփում է դասը և հանձնարարում տնային աշխատանք: (5 րոպե)

IV ԳԼՈՒԽ

§2. Համեմատություններ

Ակնարկ՝ աշակերտները կձանոթանան համեմատություններին և համեմատության հատկություններին:

Աշակերտները կկարողանան.

- Գտնել համեմատության անհայտ անդամը
- Ըստ արժեքների համեմատության դրանք արտահայտել մեկ անհայտով
- Համեմատության օգնությամբ լուծել խնդիրներ և կենցաղային իրավիճակներ

Ակտիվության նկարագիրը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին / բացատրում է անհասկանալի վարժությունները: (5 րոպե)
2. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին լուծել պարագրաֆի սկզբում տրված առաջադրանքը, որից հետո միասին, հարց-պատասխանի ռեժիմով, քննարկում են պարագրաֆում լուծված խնդիրը և ստանում՝ «երկու հարաբերությունների հավասարությունը» համեմատություն: (10 րոպե)
3. Ուսուցիչը հանձնարարում է գույգերին, լուծել պարագրաֆում իրենց տրված խնդիրը: (5 րոպե)
4. Աշակերտները կատարում են իրենց սեփական աշխատանքի շնորհանդեսը, որից հետո կմեկնաբանվեն համեմատության եզրային, միջին անդամները և համեմատության հիմնական հատկությունը: (10 րոպե)
5. Ուսուցիչը հանձնարարում է պարագրաֆում տրված անհատական հարցերը և բացատրում է պարագրաֆում լուծված №2 օրինակը: (10 րոպե)
6. Ուսուցիչը ամփոփում է արդյունքները և հանձնարարում տնային աշխատանք: (5 րոպե)

§5. Շրջանաձև դիագրամ

Ակնարկ՝ աշակերտները կձանոթանան շրջանաձև դիագրամին:

Աշակերտները կկարողանան.

- Կարդալ շրջանաձև դիագրամով տրված տեղեկությունը;
- Տրված տեղեկության հիման վրա կազմել շրջանաձև դիագրամ;
- Կիրառել շրջանաձև դիագրամը, համապատասխան խնդիրը լուծելու ժամանակ:

Ակտիվության նկարագրերը.

1. Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, կարդում է ցուցակը, ստուգում է տնային աշխատանքը և պատասխանում է աշակերտների հարցերին / բացատրում է անհասկանալի վարժությունները: (5 բոպե)
2. Ուսուցիչը հիշեցնում է աշակերտներին շրջանագծի, կենտրոնական անկյան մասին և հանձնարարում է լուծել պարագրաֆի սկզբում տրված №1-3 անհատական խնդիրները: (5 բոպե)
3. Աշակերտները կատարում են առաջադրանքի շնորհանդեսը, որից հետո քննարկում են պարագրաֆում տրված շրջանաձև դիագրամի օրինակը: (10 բոպե)
4. Ուսուցիչը տալիս է պարագրաֆում տրված անհատական հարցեր և քննարկում է պարագրաֆում լուծված խնդիրը, որից հետո, ստացած տեղեկատվության համաձայն, աշակերտները կկազմեն շրջանաձև դիագրամ: (10 բոպե)
5. Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին լուծել պարագրաֆում տրված, զույգերին հատկացված վարժությունը: (5 բոպե)
6. Աշակերտները կատարում են վարժության շնորհանդեսը: (5 բոպե)
7. Ուսուցիչը ամփոփում է արդյունքները և հանձնարարում է տնային աշխատանք: (5 բոպե)

Շնորհանդեսներ

Յուրաքանչյուր անձ, մանուկ հասակից պետք է կարողանա իր կարծիքը ձևակերպել կոնկրետ և որակյալ: Այս ունակության զարգացմանը բազմաթիվ գործոն է խանգարում լսարանի նկատմամբ վախը, ինքնավստահության պակասը, խոսքի ոչ լիարժեք ապարատը և այլն:

Վերոնշյալ ունակության ձևավորման գործում մեծ դեր կարող է խաղալ բնական միջավայրում, այսինքն դասարանի առաջ սեփական կարծիքի արտահայտումը, այդպիսով շնորհանդես անցկացնելու ժամանակ, ցանկալի է, ուսուցիչն ուշադրություն դարձնի հետևյալ հարցերին.

1. Աշակերտը խոսում է փաստերի և փաստարկների վրա հիմնվելով, նախօրոք գրի առած գրառումների հիման վրա;
2. Աշակերտը ինքնավստահ դիմում է ամբիոնին, աչքերով կապ է հաստատում և խոսում է պարզ;
3. Աշակերտը կիրառում է գննական նյութ;
4. Արդյունավետ է շնորհանդեսի նախաբանը և վերջաբանը;
5. Աշակերտը ճիշտ է օգտագործում տրամադրած ժամանակը:

Քաղվածք «Ազգային ուսումնական ծրագրից»

Աշակերտի գնահատման համակարգը

Աշակերտի գնահատման նպատակը, սկզբունքները և խնդիրները

1. Աշակերտին գնահատելու հիմնական նպատակն է ուսման որակի կառավարումը, որը ներառում է, մի կողմից ուսման որակը բարելավելու համար աշխատանքը և մյուս կողմից՝ ուսուցման-դասավանդման որակի մոնիտորինգը: Գնահատումը պետք է տա տեղեկություն աշակերտի անհատական առաջադիմության մասին:
2. Աշակերտի գնահատումը ուսուցման-դասավանդման անբաժանելի մասն է: Հաջորդական հանրակրթական ընթացքը ապահովելու համար, աշակերտի գնահատման ընթացքը պետք է հիմնվի դասավանդման կոնստրուկտիվիստական սկզբունքների վրա:
3. Աշակերտի գնահատման հիմնական խնդիրներն են՝
 - ա) Ներկայացնել, թե ինչպես է ընթանում աշակերտի գիտելիքների կառուցման ընթացքը և հիշողության մեջ ինչպես են գիտելիքները փոխկապակցվում;
 - բ) Մինչև նոր ուսումնական հարցը/թեման սկսելը, իմանալ աշակերտի նախնական գիտելիքները և պատկերացումները;
 - գ) Պարզել, թե ինչքանով է աշակերտը կարողանում ինքնուրույն գնահատել սեփական ուժեղ և թույլ կողմերը, պարզել նաև այն, թե ինչքանով գիտակցված և արդյունավետ քայլեր է անում նա իր առաջընթացին նպաստելու համար;
 - դ) Ներառել երեք կարգի գիտելիք;
 - ե) Ներկայացնել, թե ինչպես է կարողանում աշակերտը կիրառել գիտելիքների միասնությունը համապատասխան համատեքստերում:
4. Հիմնական խնդիրները լուծելու և աշակերտին գնահատելու համար, առաջնությունը կհատկացվի կոմպլեքսային, համատեքստ ունեցող առաջադրանքներին, որի լուծումը աշակերտին դրդում է գիտելիքների տարբեր բաղադրիչները կիրառել ինտերակտիվ և միաժամանակ:

Որոշող և զարգացնող գնահատում

1. Գնահատումը կարող է լինել՝ որոշող և զարգացնող:
2. Որոշող գնահատումը սահմանում է աշակերտի մակարդակը, առարկայի, ուսումնական ծրագրի արդյունքների ուղղությամբ:
3. Զարգացնող գնահատումը սահմանում է յուրաքանչյուր աշակերտի զարգացման դինամիկան և ուղղված է ուսման որակի բարելավմանը:

Որոշող և զարգացման գնահատման նկարագրությունը

	Զարգացնող	Սահմանման
Նպատակները	Բարելավել ուսման որակը, աջակցել աշակերտի առաջընթացին և զարգացմանը	Աշակերտի ակադեմիական առաջադիմության մակարդակի որոշում ըստ առարկայական ուսումնական ծրագրի
Խնդիրները	Գիտելիքների կառուցման և գիտելիքների փոխկապակցման գործընթացի գնահատում: Սահմանել նախնական գիտելիքները/ պատկերացումները: Աշակերտի կողմից իր ուժեղ և թույլ կողմերի որոշման ունակության գնահատումը: Աշակերտի կողմից սեփական առաջադիմությանը նպաստելու համար գիտակցված քայլեր անելու ունակության գնահատում: Գնահատել գիտելիքների երեք աստիճանի յուրացման ընթացքը: Գնահատել գիտելիքների միասնության կիրառման ունակությունը:	Գնահատել փոխկապակցման ունակությունը ունակությունը; Գնահատել գիտելիքների երեք կատեգորիաների կիրառման ունակությունը; Գնահատել գիտելիքների միասնության ֆունկցիոնալ կիրառման ունակությունը:
Առաջադիմության չափանիշները	Նախորդ մակարդակի արդյունքների համեմատ իրականացված առաջընթացը:	Արդյունքը առարկայական ուսումնական ծրագրի պահանջների համեմատ:
Գնահատողը և գնահատման ձևերը	Ուսուցիչ՝ Բանավոր կամ գրավոր հետադարձ կապ, խրախուսական հրահանգներ, սիմվոլիկ նշաններ և այլն: Աշակերտ Ինքնագնահատում, փոխադարձ գնահատում:	Միավորներ (հնարավոր է ուժեղ և թույլ կողմերը նկարագրելու համար ուղեկցվի մեկնաբանություններով, սխալները ուղղելու հրահանգներով):

Ակադեմիական նվաճումների մակարդակները և գնահատման համակարգը

Ուսանողի ակադեմիական ձեռքբերումները գնահատվում են 10 բալային համակարգով, որը բաժանվում է 5 մակարդակի:

Միավորներ	Գնահատման մակարդակները
10	Բարձր
9	
8	Միջինից բարձր
7	
6	Միջին
5	
4	Միջինից ցածր
3	
2	Ցածր
1	

Գնահատման գործիքներ տարրական, բազային և միջին աստիճաններում

1. V դասարանի երկրորդ կիսամյակում և VI-XII դասարաններում օգտագործում են որոշող և զարգացնող գնահատման տեսակները: Աշակերտը գնահատվում է 10 բալային համակարգով, ամենացածր միավորն է 1-ը, իսկ ամենաբարձրը՝ 10-ը:
2. V-XII դասարաններում սպորտի առարկայական խմբում միավորված առարկաներից, «Ճանապարհային նշաններ և երթևեկության անվտանգություն» և ընտրովի առարկաներից աշակերտը գնահատվում է ստուգարքի համակարգով՝ ստուգված է/չէ ստուգված:

Աշակերտի գնահատման չափանիշները

1. Կիսամյակի ընթացքում աշակերտները գնահատվում են ըստ հետևյալ երեք բաղադրիչների.
 - ա) ընթացիկ տնային աշխատանք
 - բ) ընթացիկ դասարանային աշխատանք
 - գ) ամփոփիչ հանձնարարություն
2. Ուսուցիչը կարող է կիսամյակի ընթացքում զարգացնող գնահատումը կիրառել ցանկացած բաղադրիչում:
3. Կիսամյակի ընթացքում որոշող գնահատմամբ աշակերտները գնահատվում են հետևյալ բաղադրիչներում.
 - ա) Ընթացիկ դասարանային աշխատանք (V դասարանի երկրորդ կիսամյակը, VI-XII դասարանները);
 - բ) Ընթացիկ տնային աշխատանք (VII-XII դասարանները);
 - գ) Ամփոփիչ առաջադրանք (V դասարանի երկրորդ կիսամյակը, VI-XII դասարանները):
4. Այդ հոդվածի 3-րդ կետով սահմանված բաղադրիչներն ունեն նույն կշիռը:
5. I-VI դասարաններում տնային աշխատանքի բաղադրիչը գնահատվում է միայն զարգացնող գնահատմամբ:
6. I-IV դասարաններում և V դասարանի առաջին կիսամյակում դպրոցական և ամփոփիչ վարժությունների բաղադրիչը գնահատվում է միայն զարգացնող գնահատմամբ:
7. V դասարանի երկրորդ կիսամյակի և VI-XII-րդ դասարաններում, դասարանային և ամփոփիչ վարժությունների բաղադրիչը գնահատվում է ինչպես որոշող, այնպես էլ զարգացնող գնահատմամբ:

	I-IV դասարաններ և V դասարանի առաջին կիսամյակ	V դասարանի երկրորդ կիսամյակ և VI դասարան	Բազային և միջին աստիճաններ
Ընթացիկ տնային աշխատանք	Զարգացնող գնահատում	Զարգացնող գնահատում	Զարգացնող գնահատում Որոշող գնահատում
Ընթացիկ դասարանային աշխատանք	Զարգացնող գնահատում	Զարգացնող գնահատում Որոշող գնահատում	Զարգացնող գնահատում Որոշող գնահատում
Ամփոփիչ առաջադրանք	Զարգացնող գնահատում	Զարգացնող գնահատում Որոշող գնահատում	Զարգացնող գնահատում Որոշող գնահատում

8. Ամփոփիչ առաջադրանքի բաղադրիչով պարտադիր պետք է կիրառել համալիր, համատեքստ ունեցող վարժությունները (օրինակ՝ գրել էսսե (ակնարկ), պատրաստել նախագիծ, անցկացնել լաբորատոր հետազոտում, գրել ռեֆերատ, լուծել խնդիր, տեղծել կերպարվեստի մի նմուշ, ստեղծել պատմվածք, ստեղծել տվյալների բազա, լուծել կոնկրետ խնդիր, պատրաստել ամփոփիչ-վերջնական աշխատանք կամ

ուսումնական էքսկուրսիա, պատրաստել հաշիվ և այլն): Տվյալ առաջարկները կատարողին, աշխատանքը բազմակողմանի գնահատելու համար ուսուցիչը պետք է մշակի աշակերտներին գնահատելու չափանիշներ:

9. Ազգային ուսումնական պլանը V դասարանի երկրորդ կիսամյակի, VI դասարանի և բազային-միջնակարգ աստիճանների յուրաքանչյուր առարկայի համար սահմանում է կիսամյակի ընթացքում ամփոփիչ աշխատանքների անցկացման պարտադիր նվազագույն քանակը:
10. Աշակերտը պարտավոր է կատարել դասարանում հանձնարարվող բոլոր ամփոփիչ աշխատանքները (ազգային ուսումնական պլանով նախատեսված պարտադիր նվազագույնը և դպրոցի կողմից սահմանված լրացուցիչ աշխատանքները, այդպիսիք լինելու դեպքում):
11. Եթե աշակերտը դասից բացակայելու պատճառով չի կատարի որևէ ամփոփիչ աշխատանք, դպրոցը պարտավոր է տալ նրան բացթողած ամփոփիչ աշխատանքները վերականգնելու հնարավորություն: Ամփոփիչ աշխատանքների վերականգնման ժամկետները և այն անցկացնելու ձևը սահմանված է դպրոցական ուսումնական ծրագրով:
12. Յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է, ամբիոնին ներկայացնել իր կողմից դասարանում անցկացրած ամփոփիչ վարժությունների փաստաթղթերը: Տվյալ փաստաթղթերում պետք է ներկայացված լինի՝ ամփոփիչ առաջադրանքի համարը, պայմանը, առարկայի ստանդարտի այն արդյունքը/արդյունքները, որը պետք է գնահատվի տվյալ կոնկրետ ամփոփիչ աշխատանքով, այն չափանիշները, որով կգնահատվեն տվյալ աշխատանքները, ինչպես նաև աշակերտների կողմից կատարված և ուսուցչի կողմից գնահատված ամփոփիչ աշխատանքի մի քանի օրինակ կամ կատարված ամփոփիչ աշխատանքը պատկերող նյութ:

Որոշող գնահատման միավորների տեսակները

Հանրակրթական համակարգում կիրառվում են որոշող գնահատման հետևյալ տեսակները՝

- ա) Առարկայի ընթացիկ դասարանային, ընթացիկ տնային և ամփոփիչ առաջադրանքների միավորները, որը աշակերտը ստանում է կիսամյակի ընթացքում
- բ) Առարկայի կիսամյակային միավորը՝ առարկայի համար ստացած գնահատականը ամբողջ կիսամյակի ընթացքում;
- գ) Առարկայի ամբողջ տարվա միավորը՝ առարկայի գնահատումը՝ ելնելով կիսամյակների միավորներից: Բացառություն է կազմում հինգերորդ դասարանի տարեկան միավորը, որը առարկայի երկրորդ կիսամյակի միավորն է: Տարեկան միավորին հնարավոր է գումարվի նաև տարվա քննության միավորը, եթե նման քննություն նախատեսված է դպրոցական ուսումնական ծրագրով և դպրոցի կողմից սահմանված է, որ նա ազդեցություն կգործի առարկայի տարեկան միավորի վրա:

Միավորները հաշվելու կարգը

1. Առարկայի կիսամյակային միավորը հաշվելու կարգը.
 - ա) Աշակերտի կողմից կիսամյակի ընթացքում տարբեր բաղադրիչներից ստացած միավորների գումարը պետք է բաժանվի ստացած միավորների քանակի վրա;
 - բ) Ստացած միավորը պետք է կլորանա ամբողջով (օրինակ՝ 6,15 կլորանում է մինչև 6-ը; 7,49 կլորանում է մինչև 7-ը; 8,5 կլորանում է մինչև 9-ը);
 - գ) Այն դեպքում, եթե աշակերտը չի կատարել բոլոր անցած ամփոփիչ առաջադրանքները, նրա կիսամյակային միավորը հաշվելու համար, տարբեր բաղադրիչներից ստացած միավորների գումարը պետք է բաժանել ստացած միավորների քանակի և կատարված ամփոփիչ առաջադրանքների քանակի գումարի վրա;
 - դ) Եթե կիսամյակի ընթացքում դպրոցից մեկ ուրիշ դպրոց է տեղափոխվում աշակերտը և հայտնաբերվում է, որ ընդունված դպրոցում, որևէ առարկայից քանակով ավելի շատ է արվել ամփոփիչ առաջադրանքներ, քան հին դպրոցում, նոր դպրոցը աշակերտի ամփոփիչ առաջադրանքների քանակը հաշվում է հին դպրոցում գրված աշխատանքի, նաև ընդունված դպրոցում, ընդունված պահից հետո կատարված առաջադրանքների հիման վրա:
 - ե) 36-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված կիսամյակի քննությունը հանձնելու դեպքում, կիսամյակի միավորը հաշվում են հետևյալ կերպ՝ քննությանը ստացած միավորը գումարվում է առարկայի կիսամյակի միավորին և գումարը բաժանվում է երկուսի:
2. Առարկայի տարեկան միավորը հաշվելու կարգը.
 - ա) Առարկայի տարեկան միավորը հաշվելու համար, առարկայի կիսամյակների միավորների գումարը պետք է բաժանվի երկուսի:
 - բ) Առարկայի տարեկան միավորը կլորանում է մինչև ամբողջը (օրինակ՝ 7,25 կլորանում է մինչև 7-ը; 4,49 կլորանում է մինչև 4-ը; 9,5 կլորանում է մինչև 10-ը):
 - գ) Եթե դպրոցական ուսուսման ծրագիրը սահմանել է տարեկան քննություն և որոշված է, որ վերոհիշյալ քննության միավորը ազդեցություն կգործի առարկայի տարեկան միավորի վրա, տվյալ դեպքում առարկայի տարեկան միավորը երեք (երկու՝ կիսամյակների և մեկ՝ քննության) միավորի միջին թվաբանականն է՝ կլորացված մինչև ամբողջը:
 - դ) Եթե աշակերտը, դպրոցից դպրոց անցնելու պատճառով տարբեր առարկաներ է սովորել և մինչև այդ ուսուսմասիրված առարկայի համար ստացել է 32-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված գնահատականը, որի միջին թվաբանականը կազմում է 5,0 կամ ավել միավոր, այս միավորը ամրագրվում է որպես ուսուսմասիրված առարկայի տարեկան միավոր: Դրա հետ մեկտեղ ընդունող դպրոցը պետք է գնահատի աշակերտին նոր առարկայից, եթե նա կներկայանա մինչև կիսամյակի ավարտը:
 - ե) Աշակերտի կողմից կիսամյակը ավարտելուց հետո դպրոցից դպրոց անցնելու պատճառով, ընդունող դպրոցում տարբեր առարկաներ ուսուսմասիրելու դեպքում, տարբեր առարկաների կիսամյակային միավորը կհաշվեն որպես երկու անկախ առարկաների տարեկան միավոր: (Օրինակ՝ եթե աշակերտը առաջին կիսամյակում որպես օտար լեզու ուսուսմասիրել էր ֆրանսերենը,

իսկ երկրորդ կիսամյակում ֆրանսերենի փոխարեն՝ գերմաներենը, տվյալ դեպքում ֆրանսերեն լեզվի կիսամյակային միավորը, դառնում է ֆրանսերեն լեզվի տարեկան միավոր, իսկ գերմաներեն լեզվի կիսամյակային միավորը՝ գերմաներեն լեզվի տարեկան միավոր):

3. Աստիճանի միավորը հաշվելու կարգը.

- ա) Աստիճանի միավորը հաշվելու համար, գումարվում է յուրաքանչյուր աստիճանի ընթացքում ուսուցասիրված բոլոր առարկաների տարեկան միավորը և գումարը բաժանվում է տարեկան միավորների ընդհանուր քանակին:
- բ) Աստիճանի միավորը կլորանում է տասնավորի ճշգրտությամբ (օրինակ՝ 6,43-ը կլորանում է մինչև 6,4; 7,58-ը կլորանում է մինչև 7,6; 9,75-ը կլորանում է մինչև 9,8):

Նոր ազգային ուսումնական ծրագրով սահմանված մաթեմատիկայի ծրագիր

VI դասարանում տարվա վերջի արդյունքները և ցուցանիշները

Մաթ.VI.1. Աշակերտը կարող է դիրքային համակարգը կիրառելով պատկերել, համեմատել և դասավորել ոչ բացասական ռացիոնալ թվերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տրված (օրինակ, հինգ, վեց կամ յոթ) թվանշաններով կազմում է ամենամեծ (ամենամոտր) (հնգանիշ, վեցանիշ կամ յոթանիշ) թիվը:
- Տասնորդական կոտորակները ներկայացնում է տարբեր տեսքով (այդ թվում թվային ճառագայթի վրա): Վերջավոր տասնորդական կոտորակը գրում է կոտորակի տեսքով:
- Կարողում է վերջավոր տասնորդական կոտորակի գրառումը, ցույց է տալիս կարգերը և անվանում թվանշանների իմաստներն ըստ կարգերի: Այս գիտելիքները կիրառում է տասնորդականները համեմատելիս և դասավորելիս (այդ թվում թվային ճառագայթի վրա):
- Կոտորակի գրառման մեջ ցույց է տալիս դրա ամբողջական և կոտորակային մասերը, կոտորակի համարիչը և հայտարարը: Այս գիտելիքները կիրառում է կոտորակների գնահատման, համեմատման, դասավորման ժամանակ:
- Կոտորակը ներկայացնում է չկրճատվող տեսքով: Համապատասխան դեպքում կոտորակը պատկերում է վերջավոր տասնորդական կոտորակով:

Մաթ .VI.2. Աշակերտը կարող է ոչ բացասական ռացիոնալ թվերով թվաբանական գործողություններ կատարել և գնահատել գործողությունների արդյունքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կոտորակներով գումարման/հանման գործողություններ կատարելիս՝ կիրառում է կոտորակի հիմնական հատկությունը: Գտնում է տրված թվի մասը և լուծում հակադարձ խնդիրները:
- Հաշվումները պարզեցնելու համար՝ կիրառում է ռացիոնալ թվերի գրառման համարժեք ձևերը և թվաբանական գործողությունների հատկությունները (օրինակ, դրանք բանավոր կատարելիս):
- Կլորացնում է տասնորդական կոտորակները տրված ճշտությամբ (տասնորդականի և հարյուրերորդականի): Գտնում է (առանց ճշտությունը մատնանշելու) թվաբանական արտահայտության մոտավոր արժեքը:
- Գտնում է անհայտ բաժանարարը տրված քանորդով և բաժանելով: Համանման ձևով գտնում է անհայտ բազմապատկելին, տրված արտադրյալի և մյուս բազմապատկելիի միջոցով: Ստուգում է պատասխանը:

Մաթ VI.3. Աշակերտը կարող է իրար հետ կապել և կիրառել չափման տարբեր միավորները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Չափման փոքր և մեծ միավորների հարաբերակցությունը պատկերելիս (երկարության, մակերեսի, կշռի, ծավալի, տարողունակության)՝ կիրառում է տասնորդական կոտորակներով բազմապատկումը:
- Միմյանց հետ կապում է երկարության, մակերեսի և տարողունակության համապատասխան միավորները:
- Բնագիտական բնագավառի տվյալներ պարունակող խնդիրները լուծելիս (օրինակ, խնդիրներ մասշտաբի, լուծույթի, համաձուլվածքի մասին)՝ կիրառում է համաչափությունը և գնահատումը:
- Ժամանակահատվածը գտնելու համար (օրինակ, որոշում է Թբիլիսիից առավոտյան ժամը 6:00-ին Բոստոն թռած ինքնաթիռի վայրէջքի ժամանակը, եթե Թբիլիսիի և Բոստոնի միջև 9-ժամվա տարբերություն կա, իսկ ճանապարհորդության համար անհրաժեշտ է 13 ժամ)՝ կիրառում է ժամային գոտիների մասին գիտելիքները, ժամանակի միավորների հարաբերակցությունները և գումարման-հանման գործողությունները:

Մաթ.VI.4. Աշակերտը կարող է լուծել խնդիրները՝ կատարելով հաշվարկումներ, հաշվելով տարբերակները և գործածելով հարաբերակցությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խնդիրներ լուծելիս կիրառում է դիրքային համակարգի մասին իր գիտելիքները, սպառման և բացառման եղանակները, փաստորոշված բաժանումը (օրինակ, խնդիրների տարբերակները հաշվելու վերաբերյալ, գրավոր ալգորիթմի կիրառմամբ կատարված բազմապատկման նմուշօրինակում բաց թողնված թվանշանների տեղադրում և պատասխանի փաստարկում, հաշվել, թե քանի տարի է 1200 օրը՝ նկատի առնելով նահանջ տարիները):
- Թվերի հատկանիշները կամ թվային համատեղությունների հարաբերակցությունը որոշելիս՝ ճիշտ է կիրառում «բոլորը», «ամեն», «յուրաքանչյուր», «որոշ», «որևէ մեկը», «ոչ մի», «միակը» բառերը:
- Գործածում է ընդհանուր ու մասնավոր տիպի հարաբերակցություններ և դատողություններ է անում թվային հատկությունների/թվային օրինաչափությունների վերաբերյալ տրված արտահայտության ճշգրտության մասին:
- Խնդիրների լուծման ժամանակ հաշվումներ կատարելիս՝ դատողություններ է անում, թե որն է ավելի նպատակահարմար՝ գնահատել թվաբանական գործողությունների արդյունքը, թե՞ գտնել դրա ճիշտ արժեքը:

Ուղղություն՝ օրինաչափություն և հանրահաշիվ

Մաթ. VI.5. Աշակերտը կարող է պատկերել, ընդարձակել և նկարագրել մեծությունների միջև եղած կախվածությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տրված կախվածության համար (այդ թվում իրական հանգամանքներում) որակապես և քանակապես նկարագրում է, թե ինչ ազդեցություն է ունենում մի մեծության փոփոխությունը նրանից կախված մի այլ մեծության, այլ հատկանիշների վրա:
- Բանավոր տրված օրենքի համաձայն կամ տրված տառային արտահայտության մեջ տարբեր թվեր տեղադրելով՝ լրացնում է մեծությունների միջև եղած կախվածությունն արտահայտող աղյուսակը:
- Ընդարձակում է մեծությունների միջև եղած կախվածությունն արտահայտող աղյուսակը. փոփոխականի մատնանշված արժեքի համար գտնում է կախյալ մեծության բաց թողնված արժեքները:

Մաթ. VI.6. Հիմնախնդիրները լուծելիս աշակերտը կարող է կազմել, պարզեցնել հանրահաշվական արտահայտությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կազմում է իրական հանգամանքներին կամ բանավոր նկարագրությանը համապատասխանող (օրինակ, գծային արտահայտությամբ տրված) հավասարություն, անհավասարություն, հավասարում:
- Ըստ խնդիրը լուծելու համար կազմված հավասարման, որոշում է, թե խնդրի լուծման վրա ինչ ազդեցություն է թողնում մի մեծության փոփոխությունը:
- Տառային արտահայտությունը պարզեցնելու և հանրահաշվական արտահայտությունների համարժեքները որոշելու համար՝ կիրառում է գուգորդական, տեղափոխական և բաշխական հատկանիշները:

Ուղղություն՝ երկրաչափություն և տարածության ընկալում

Մաթ. VI.7. Աշակերտը կարող է ճանաչել, նկարագրել և տարբեր եղանակներով պատկերել տարածական մարմինները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ըստ տրված երկրաչափական հատկանիշների (օրինակ, նիստերի ձևը և քանակը) անվանում է տարածական պատկերի հնարավոր տեսակը:
- Համապատասխան տերմիններ կիրառելով՝ նկարագրում է տարածական երկրաչափական պատկերների տրված գրաֆիկական պատկերները կամ պատկերների փոխադարձ դիրքը (օրինակ, ուղղանկյուն գուգահեռանիստի ո՞ր նիստերին է պատկանում մատնանշված զագաթը):
- Պատրաստում է տարածական պատկերի փովածք: Տարբերում է տարածական պատկերներն ըստ դրանց փովածքի:

Մաթ. VI.8. Աշակերտը կարող է ցուցադրել երկրաչափական վերափոխումները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տրված հարթ պատկերը (կետ, հասված, բեկյալ, բազմանկյուն) զուգահեռ ուղղությամբ տեղափոխում է այնպես, որ դրա մատնանշված կետն անցնի հարթության մատնանշված կետով:
- Վանդակավոր թերթի վրա կառուցում է հարթ պատկերի համաչափ պատկերը՝ մատնանշված համաչափության առանցքի նկատմամբ:
- Գտնում է պատկերների համաչափ կազմաձևի համաչափության առանցքը/առանցքները և փաստարկում պատասխանը (օրինակ, ծալելով, հայելի կիրառելով):

Մաթ. VI.9. Աշակերտը կարող է որոշել պատկերների միջև և պատկերների տարրերի միջև հարաբերակցությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբեր պատկերների համար (հարթ, տարածական) հաշվում և համեմատում է էյլերի բնութագրիչների արժեքները: Տարածական պատկերների տարրերի քանակը որոշելու համար՝ կիրառում է էյլերի բանաձևը:
- Պատկերների նմանությունը և համաչափությունը որոշելու համար՝ կիրառում է երկրաչափական վերափոխումները:
- Հարթության վրա շրջանագծերի փոխադարձ դիրքի վերաբերյալ եզրակացություն է անում՝ գործածելով դրանց կենտրոնների հեռավորություններն ու շառավիղները:

Մաթ. VI.10. Հիմնախնդիրը լուծելիս աշակերտը կարող է չափել հարթ պատկերի մակերեսը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հարթ պատկերը ծածկում է միանման քառակուսիների ցանցով և գնահատում դրա մակերեսը (օրինակ, հաշվում է պատկերը լրիվությամբ ծածկելու համար անհրաժեշտ քառակուսիների նվազագույն քանակը և պատկերի ներսում քառակուսիների քանակները և գնահատում մակերեսը, որպես այդ երկու թվերի միջև տեղադրված մեծություն):
- Իրական հանգամանքներում գտնում է ուղղանկյունաձև օբյեկտի (օրինակ, դասասենյակի հատակը) մակերեսը և արդյունքը ներկայացնում համապատասխան միավորներով (այդ թվում կիրառելով կոտորակները):
- Մակերեսի հաշվարկման վերաբերյալ գործնական խնդիրներ լուծելիս՝ կիրառում է մակերեսի հատկությունը:

Ուղղություն. Տվյալների վերլուծություն, հավանականություն և վիճակագրություն

Մաթ. VI.11. Աշակերտը կարող է գտնել տրված խնդիրը լուծելու համար անհրաժեշտ որակական և քանակական տվյալները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պատրաստի հարցաթերթիկի միջոցով հարցաքննում է մատնանշված հարցվողներին և տվյալներ է ժողովում:
- Անցկացնում է վիճակագրական պարզ գիտափորձ և հավաքում տվյալներ (օրինակ, համադասարանցիներին խնդրում է , որ գնահատեն գրատախտակին գծված պատկերի որևէ հատվածի երկարությունը և նույն հատվածի երկարությունը՝ առանձին վերցված):
- Ընտրում է տվյալները հավաքելու հարմարավետ եղանակը (դիտարկում, չափում, տվյալների ժողովում տրված համատեղությունից) և կիրառում է դա, հիմնավորում է իր ընտրությունը:

Մաթ. VI.12. Աշակերտը կարող է կարգավորել որակական և քանակական տվյալները և խնդիրը լուծելու համար դրանք ներկայացնել հարմարավետ տեսքով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դասակարգում և դասավորում է որակական և քանակական տվյալները (բացի դիսկրետ քանակական տվյալները ինտերվալներով խմբավորելուց):
- Կազմում է տվյալների աղյուսակներ, այդ թվում, խմբավորված քանակական տվյալների դեպքում:
- Կազմում է շրջանային և սյունակային դիագրամներ (երբ տվյալները տալիս են սանդղակի հեշտ ընտրության հնարավորություն):

Մաթ. VI.13. Աշակերտը կարող է մեկնաբանել քանակական և որակական տվյալները և կատարել տարրական վերլուծություն:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հաշվում է ամփոփիչ թվային բնութագրիչները (տվյալների միջին, առավելագույն, նվազագույն հատկանիշները) դիսկրետ քանակական տվյալների համար և կիրառում դրանք տվյալների համատեղությունը բնութագրելու համար:
- Նախապես տրված վիճակագրական բնութագրիչների միջոցով, համեմատում է տվյալների մի քանի համատեղություն:
- Գտնում է տվյալների համատեղության մեջ գոյություն ունեցող օրինաչափությունները և դատողություններ անում դրանց մասին:

Ծրագրի բովանդակությունը

1. Գործողություններ տարբեր հայտարար ունեցող ոչ բացասական կոտորակներով
2. Ոչ բացասական տասնորդական կոտորակներ: Տասնորդական կոտորակ և կոտորակ կապը (վերջավոր) տասնորդականի դեպքում
3. Գործողություններ ոչ բացասական տասնորդականներով
4. Բնական թվերի վերլուծումը պարզ արտադրիչների
5. Մի քանի բնական թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը և ամենամեծ ընդհանուր բաժանարարը
6. Պարզ և բաղադրյալ բնական թվեր, բաժանարար և բազմապատիկը
7. Մնացորդով բաժանում, մնացորդը և բաժանելության նշաններից որևէ մեկը
8. Երկարության, մակերեսի և ծավալի միավորների կապը
9. Ժամանակի միավորներ (ժամ, րոպե, վայրկյան, տարի, նահանջ տարի)
10. Երկարության և ծավալի միավորները և դրանց միջև եղած կապը
11. Երկու մեծությունների միջև եղած կախվածությունները, որոնք տրվում են գումարում, հանում կամ բազմապատկում պարունակող արտահայտության տեսքով
12. Գումարում, հանում կամ բազմապատկում պարունակող թվային և տառային արտահայտությունները, դրանց պարզեցումը և կիրառումը տեքստային խնդիրներ լուծելիս
13. Գումարում, հանում կամ բազմապատկում պարունակող թվային անհավասարություններ և դրանց հատկությունները
14. Երկրաչափական վերափոխումներ հարթության վրա. առանցքային համաչափություն, զուգահեռ տեղափոխություն
15. Հարթ պատկերի մակերեսը
16. Տարածական պատկերների տարրերի քանակական կախվածությունը (օրինակ, էյլերի բանաձևը)
17. Տարածական մարմինների մոդելները, քառակուսի և ուղղանկյուն զուգահեռանիստի փովածքները
18. Որակական և քանակական տվյալներ ժողովելու միջոցները. չափում, դիտարկում, հարցում: Տվյալների ժողովում աղբյուրներից (օրինակ, տեղեկատու, քարտարան, համացանց): Վիճակագրական գիտափորձը
19. Որակական և քանակական տվյալների կազմակերպում. ինտերվալներով խմբավորված քանակական տվյալներ
20. Տվյալների կարգավորված համատեղությունների որակական հատկանիշները. կրկնողական տիպի օրինաչափություններ
21. Որակական և քանակական տվյալները ներկայացնելու միջոցներ. սյունակավոր և շրջանաձև դիագրամներ
22. Տվյալների ամփոփիչ թվային բնութագրիչներ որակական և քանակական տվյալների համար. կենտրոնական հաճախականության չափում՝ տվյալների միջինը: Մեծագույն և փոքրագույն արժեքներ

Ուսումնական նյութի ներկայացման փուլերը և դասի պլանավորման հիմնական սկզբունքները

Բովանդակությունը	Թեմայի կապը արդյունքին և նպատակներին	Մոտավոր ժամանակահատվածը
I Գլուխ 1. Տասնորդական կոտորակներ 2. Տասնորդական կոտորակների համեմատումը 3. Տասնորդական կոտորակների գումարումը 4. Տասնորդական կոտորակների հանումը 5. Տասնորդական կոտորակների կլորացումը 6. Բազմապատկում և բաժանում 10-ով/ի, 100-ով/ի, 1000-ով/ի 7. Տասնորդական կոտորակների բազմապատկումը 8. Տասնորդական կոտորակների բաժանումը բնական թվի 9. Բաժանում տասնորդական կոտորակի վրա 10. Ուղղանկյուն գուգահեռանիստի ծավալը 11. Բազմանիստների փոխաձեռնումը 12. Ուղղանկյուն գուգահեռանիստի մակերևույթի մակերեսը 13. Հաշվենք հաշվիչով I Գլխի լրացուցիչ վարժություններ	VI. 1 VI 3 VI. 7 VI. 8 VI. 9	35 ժամ
Ամփոփիչ աշխատանք		3 ժամ
Գլուխ II 1. Բաժանարարներ և բազմապատիկներ 2. Բնական թվերի բաժանելիությունը 9-ի, 3-ի 3. Բնական թվի վերլուծումը պարզ արտադրիչների 4. Ամենամեծ ընդհանուր բաժանարարը 5. Բնական թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը 6. Լուծենք խնդիրները 7. Կոտորակի կրճատումը 8. Կոտորակների հավասարությունը 9. Գործնական աշխատանք 10. Կոտորակների գումարում և հանում 11. Կոտորակի լրացումը մինչև մեկը 12. Խառը թվերի գումարումը և հանումը 13. Հատվածների համեմատումը 14. Բեկյալ 15. Շրջան, Շրջանագիծ 16. Երկու շրջանագծերի փոխդասավորությունը, Ինքնաստուգման թեստ II գլխի լրացուցիչ վարժություններ	VI. 2 VI 8 VI. 9	45 ժամ
Ամփոփիչ աշխատանք		3 ժամ

<p>Գլուխ III</p> <ol style="list-style-type: none"> 1. Կոտորակների բազմապատկումը 2. Գործնական աշխատանք 3. Կոտորակներով խնդիրների լուծում 4. բազմապատկման տեղափոխական օրենքը 5. Հակադարձ թվեր 6. Սովորական կոտորակների բաժանումը 7. Խնդիրներ կոտորակների վերաբերյալ 8. Լուծենք խնդիրները 9. Ընդհանուր գործողություններ սովորական և տասնորդական կոտորակներով <p>Ինքնաստուգման թեստ՝</p> <p>III գլխի լրացուցիչ վարժություններ</p>	<p>VI. 2</p>	<p>25 ժամ</p>
<p>Ամփոփիչ աշխատանք</p>		<p>2 ժամ</p>
<p>Գլուխ IV</p> <ol style="list-style-type: none"> 1. Հարաբերություններ 2. Համեմատականություն 3. Տեղի պլան 4. Լուծել խնդիրներ համեմատականության կիրառմամբ 5. Շրջանաձև դիագրամ 6. Համակարգիչի օգնությամբ կազմել դիագրամ 7. Միջին թվաբանական 8. Հիմնախնդրի որոնում 9. Զուգահեռ տեղափոխում 10. Առանցքային սիմետրիա 11. Փոքր չափսի տարբեր մարմինների մակերեսը <p>Ինքնաստուգման թեստ՝</p> <p>IV Գլխի լրացուցիչ խնդիրներ աթեմատիկայի սիրահարների համար</p>	<p>VI. 10</p> <p>VI. 11</p> <p>VI. 12</p>	<p>25 ժամ</p>
<p>Ամփոփիչ աշխատանք</p>		<p>2 ժամ</p>
<p>Պահեստային ժամ</p>		<p>12 ժամ</p>

Լուծումներ, նշումներ

I ԳԼՈՒԽ

§1. Տասնորդական կոտորակներ

Բացատրել աշակերտներին, որ կոտորակների այն խումբը, որի հայտարարը 10-ի որոշակի աստիճանն է, գործնականորեն հատուկ կիրառում ունի: Դրա ապացույցն է չափման միավորների միջև փոխկապակցվածությունը: Հիշեցնենք դրանք և տանք տասնորդական կոտորակների գրառումը, բացատրենք կարգերի անվանումները և այն, թե ինչպես համեմատել տասնորդական կոտորակները: Խնդիրների մեծամասնությունը տրամադրվում է չափման միավորների միջև եղած կախվածությանը՝ այսինքն փոքր չափման միավորի արտահայտումը ավելի մեծ չափման միավորով: Նշենք նաև այն, որ տասնորդական կոտորակի գրառումը, չունի միայն այս գործոնը: Տասնորդական կոտորակը սովորական կոտորակ է, այդպիսով դրա հետ կապված գործողությունները սովորական կոտորակների նման պետք է յուրացնել: Աշակերտը պետք է կարողանա տասնորդական կոտորակների գրառման մեջ անվանել կարգերը, տասնորդական կոտորակը վերածել սովորական կոտորակի և հակառակը (երբ դա հնարավոր է): Տասնորդական կոտորակը, որպես սովորական կոտորակ գրելու ժամանակ ցույց տանք, թե ինչպես պետք է գրել խառը թիվը, որպես անկանոն կոտորակ $5,3 = \frac{53}{10}$: Սովորեցնենք աշակերտներին տասնորդական թվերը հավաքել հաշվիչով:

20. $1,26 \text{ կմ} = \frac{126}{100} \text{ կմ} = 1260 \text{ մ}$ $1260 : 70 = 18$ (րոպե).

Պատասխան՝ 18 րոպեում:

26. $3 \text{ կգ} = 3000 \text{ գ}$ $\frac{3000}{30} = 100$ (գ) $\frac{1055}{5} = 211$ (գ).

Ծանր է կոնֆետի փաթեթը

29. ծանր $2 < 2, 3 < 3$

30. 2^{12}

31. 29 րոպեում

32. $S = 10,5 \text{ կմ}$. $V = V_1 - V_2 = (V_1 - 6) \text{ կմ/ժամ}$: $t = \frac{1}{4} \text{ ժամ}$.

$$10,5 = \frac{1}{4} (V_1 - 6)$$

$$42 = V_1 - 6$$

$$V_1 = 48 \text{ կմ/ժամ}$$

§2. Տասնորդական կոտորակների համեմատումը

Աշակերտները զիտեն բնական թվերի համեմատումը ըստ կարգերի, նմանատիպ սխեմայով ներկայացնենք նրանց, թե ինչպես պետք է համեմատեն տասնորդական կոտորակները,

Նրանք պետք է կարողանան համեմատել թվերը և միևնույն ժամանակ, ցուցադրել նրանց փոխադարձ դասավորվածությունը թվային առանցքի վրա:

12. ծանր $5 < 5,6 < 6;3$

14. է) $7,34 = \frac{734}{100}$; հայտարարը (բաժանարար) նվազել է 10-անգամ, ուրե՛մն կոտորակը աճել է 10-անգամ: Այսպիսով ստորակերը մեկ կարգ աջ տեղափոխելիս կոտորակը աճում է 10-անգամ:

15. բ) $51,2 = \frac{512}{10}$, $5,12 = \frac{512}{100}$ Հայտարարը աճել է 10-անգամ, ուրե՛մն կոտորակը նվազել է 10-անգամ:

17. ա) նվազագույնն է՝ 16,123
մեծագույնն է 16,321 .

22. $(4054-2):2=2026$ 2026; 2028.

23. $999-9=990$

§ 3-4. Տասնորդական կոտորակների գումարում-հանումը

Պարզ է, որ եթե աշակերտները տասնորդական թվերը գրառեն սովորական կոտորակի տեսքով, դրանցով գործողություններ կատարել չեն դժվարանա, դրանք սովորական միևնույն հայտարար ունեցող կոտորակներ են: Մովորեցնենք տասնորդական կոտորակների պոնակաձև. գործողությունները: Աշակերտները ծանոթ են բնական թվերի պոնակաձև գումարում-հանմանը, կարևորը ստորակետը ճիշտ տեղում դնեն և հասկանան նաև այն, որ ստորակետից հետո գրված թվին աջից ինչքան զրո էլ կցագրենք, թիվը չի փոխվի:

Հիշեցնենք բնական թվերի գումարման կարգը:

§3. Տասնորդական կոտորակների գումարումը

9. ա)
$$\begin{array}{r} 1,26 \\ + 2,187 \\ \hline 3,447 \end{array}$$

բ)
$$\begin{array}{r} 14,249 \\ + 23,128 \\ \hline 37,377 \end{array}$$

գ)
$$\begin{array}{r} 1,587 \\ + 19,234 \\ \hline 20,821 \end{array}$$

11. ա) B(3); բ) B(3,75).

12. $2,25+2,25+1,35+1,35+3,2+2,15+2,15=14,7$ (լարի) Պատասխան՝ բավական է:

13. $30,5+10+(30,5+10)+50=131$ (կգ):

14. ա) $3,2+1,8=5$;

բ) $5+2,19=7,19$;

գ) $14,13+1,2=15,33$.

17.	20 թ	1	1	-	-	-	-	-	2
	10 թ	1	2	4	3	2	1	-	-
	5 թ	2	-	-	2	4	6	8	-

ընդամենը 8 տարբերակ է:

§4. Տասնորդական կոտորակների հանումը

$$11. \begin{array}{r} - \quad * \quad * \quad * \\ 17,28 \\ \hline 11,24 \end{array} + \begin{array}{r} 11,24 \\ 17,28 \\ \hline 28,52 \end{array} + \begin{array}{r} 28,52 \\ 17,28 \\ \hline 45,80 \end{array} \quad \text{Պատասխան՝ } 45,8.$$

$$12. \text{ա) } \begin{array}{r} _ 5823,5 \\ \quad 58,235 \\ \hline 5765,265 \end{array}$$

$$15. \text{ա) } \begin{array}{r} _ 157,14 \\ \quad 10,25 \\ \hline 146,89 \end{array}$$

$$18. \text{ա) } 15,37 - 1,2 = 14,17; \quad \text{բ) } 24,513 - 1,281 = 23,232.$$

19. Հոսանքի ուղղությամբ նավը կընթանա $12,5 + 2,3 = 14,8$ (կմ/ժամ) արագությամբ, իսկ հակառակ ուղղությամբ՝ $12,5 - 2,3 = 10,2$ (կմ/ժամ) արագությամբ:

$$21. \text{ա) } 6 \text{ Լ; } \quad \text{բ) } 7 \text{ Լ.}$$

$$22. \frac{2 \cdot (36 + 24)}{6} = 20.$$

§5. Տասնորդական կոտորակների կլորացումը

Ամբողջ թվերի կլորացումը մենք ուսումնասիրեցինք V դասարանում: Տասնորդական կոտորակները կլորացնելիս պահպանվում է միևնույն սկզբունքը, անդրադառնանք կլորացվող և կլորացված թվերի դասավորվածությանը թվային առանցքի վրա: Պարագրաֆի վերլուծված 1-ին օրինակը ծանոթացնենք աշակերտներին, ինչպես կարող է թիվը, որի տասնորդական գրառման մեջ շատ թիվ կա, կլորանա մինչև հազարերորդական, հարյուրերորդական և տասնորդական:

$$4. \text{ Ծախսել է՝ } 7,35 + 2,50 + 2,50 + 1,20 = 13,55 \text{ լարի:}$$

$$\text{Մնացել է՝ } 45,50 - 13,55 = 31,95 \approx 32 \text{ լարի:}$$

$$7. \text{ա) } 11,3 + 8,1 + 9,1 = 28,5$$

$$\text{բ) } 11,25 + 8,131 + 9,14 = 28,521 \approx 28,5$$

9. Դիտարկենք համապատասխան կարգերի գումարը:

		I սյունակ	II սյունակ
միավորներ	-	$101 \cdot 9 = 9$	$9 \cdot 1 = 9$
տասնավորներ	-	$2 \cdot 8 = 16$	$8 \cdot 2 = 16$

և այլն: Գումարները հավասար են:

10. Մեկ փեղկ ներկելու համար՝ $84:14=6$, ուրեմն 25 փեղկ ներկելու համար անհրաժեշտ է՝ 150 լարի:

§6. Բազմապատկում և բաժանում 10-ի, 100-ի, 1000-ի

Կատարենք տասնորդական կոտորակի 10-ով, 100-ով բազմապատկումը կարգային գումարելիների վերլուծման ճանապարհով այնպես, ինչպես ցույց է տրված պարագրաֆում, դրանից հետո աշակերտները պետք է անեն համապատասխան եզրահանգում՝ տասնորդական կոտորակի 10-ի աստիճանների բազմապատկման և բաժանման վերաբերյալ: Հատուկ ուշադրություն դարձնենք 10-րդ, 16-րդ վարժությունների վրա: Աշակերտները լավ պետք է տիրապետեն չափման միավորների արտահայտմանը, և այդ ունակությունը կիրառեն խնդիրներ լուծելիս:

9. ա) Ո՞ր թվով բազմապատկենք 12,5-ը, որ ստանաք 125: Պատասխան՝ 10-ով:
բ) Ո՞ր թվի վրա պետք է բաժանենք 157-ը, որ ստանանք 1,57: Պատասխան՝ 100-ի:

12. ա) $x=0,515$; բ) $x=70$; գ) $x=1322,5$.

16.		կար	դարձավ	34,46–4,94=29,52 դմ: Պատասխանը՝ կանի 29,52 դմ-ով:
	երկարություն	2,3 դմ	0,23 դմ	
	լայնություն	0,17 դմ	17 դմ	
	պարագիծ	4,94 դմ	34,46 դմ	

17. Մեկ ծաղկից ստանում է $\frac{100}{100\ 0000} = \frac{1}{10\ 000}$ գ մեղր:

18. $55-55\cdot 0,1-55\cdot 0,01=55-5,5-0,55=48,95$ լարի:

19. ա) $21:103=0,021$; բ) 7,04; գ) 0,06; դ) 0,00607:

24. 2-ի բաժանվում է 50 թիվ, 3-ի բաժանվում է $\frac{100}{3}=33(1)$, ուրեմն 33 թիվ, ընդամենը՝ $50+33=83$, սակայն հաշվելու ժամանակ 2 անգամ վերցրել են այն թվերը, որոնք բաժանվում են ինչպես 2-ի, այնպես էլ 3-ի, ուրեմն բաժանվում են 6-ի, այսպիսին է $\frac{100}{6}=16(4)$, ուրեմն 16 թիվ: Այսպիսով, ճիշտ պատասխանն է՝ $83-16=67$ թիվ:

26. $1+2+3+\dots+9=45$:

§7. Տասնորդական կոտորակների բազմապատկումը

Աշակերտներին խնդրել, որպեսզի նրանք, հաշվիչի օգնությամբ բազմապատկեն երկու տասնորդական կոտորակներ: Գրի առնեն արդյունքը և բազմապատկեն միևնույն թվերով գրված ամբողջ թվերը (միևնույն պատասխանները առանց ստորակետների): Այս արդյունքն էլ դուրս գրեն: Տվյալ ընթացքը կրկնեն մի քանի անգամ և ձևակերպեն տասնորդականների բազմապատկման կարգը:

Հիշեցնենք աշակերտներին թվաբանական գործողությունների կանոնները և նշենք, որ հաշվիչով գործողությունները արագ են ընթանում, սակայն ցանկալի է, որ այս գործողությունները մենք կատարենք ինքնուրույն և առավելագույնս պարզեցնենք ըստ հաշվարկի թվաբանական մեթոդի (երբ դա հնարավոր կլինի): Վերլուծենք պարագրաֆի սկզբում տրված խնդիրը: Ուղղանկյան մակերեսը հավասար է նրա երկարության և լայնության արտադրյալին: Գծագրի վրա տրված է 10×10 -ի քառակուսին: Յուրաքանչյուր փոքր քառակուսու կողմի երկարությունը $0,1$ միավոր է: Գունավորված է այն ուղղանկյունը, որի կողմերի երկարությունը կազմում է $0,7$ և $0,3$: Նման ուղղանկյան մակերեսը կազմում է $0,7 \cdot 0,3$, որը, եթե դիտեք գծագիրը, հավասար է մեծ քառակուսու $0,21$ -ին:

17. $11,4 \cdot (11,4 \cdot 2,3) = 298,908$ $298,908 \approx 298,9$ սմ²

18. $S = a \cdot 0,8 \cdot b \cdot 1,2 = 0,96ab$

Դարձել է սկզբնական մակերեսի $0,96$ մասը:

20. ք) վերջին թվեր՝ $5 \cdot 2$ -ի արտադրյալը վերջանում է 0 -ով և ոչ թե 6 -ով:

21. Նավը լճով անցնում $2 \cdot 10,5 = 21$ կմ.: Գետով նավը կշարժվեր $10,5 - 2,3 = 8,2$ կմ/ժամ արագությամբ և կանցներ $0,5 \cdot 8,2 = 4,1$ կմ-ժամ: Ընդամենը կանցներ՝ $4,1 + 21 = 25,1$ (կմ):

22. Հոսանքի ուղղությամբ նավը շարժվում է $12,3 + 3,2 = 15,5$ (կմ/ժամ) արագությամբ և անցնում՝ $1,25 \cdot 15,5 = 19,375$ (կմ-ժ):

23. $30 \cdot 7 + 7 \cdot 9 = 7 \cdot 39 = 273$ (լարի):

24. 4 ժամվա ընթացքում առաջին ավտոմեքենան անցել է 200 կմ, երկրորդը որ հասնի նրան 70 կմ/ժամ – 50 կմ/ժամ = 20 կմ/ արագության տարբերությամբ 1 ժամվա ընթացքում պետք է անցնի այդ հեռավորությունը, ուրեմն հավասար է $t = 200 : 20 = 10$ (ժամ):

25. $450 - 2 \cdot 40 - 3 \cdot 90 = 60$: Պատասխան՝ Լելայի մոտ մնացել է 60 լարի:

§8. Տասնորդական կոտորակների բաժանումը բնական թվի վրա

Ինչպե՞ս բաժանենք թիվը բնական թվի վրա: Տվյալ ընթացքը մանրամասնորեն տրված է պարագրաֆում, կարևորը այն է, որ աշակերտները դա լավ ուսուսմասիրեն, կատարեն բաժանում և ճիշտ տեղում դնեն ստորակետը: Աշակերտները գիտեն, որ կոտորակը կարող է գրվել հարաբերության տեսքով, այդպիսով էլ սովորական կոտորակը, որպես տասնորդական կոտորակ գրելու կարգը այս հարաբերության արդյունքն է: Բնական է, որ աշակերտի մոտ առաջանա հարց անվերջ բաժանման մասին: Առանց որևէ խիստ դատողություններ անելու ներկայացնենք նման կոտորակները և նշենք, որ դրանց մասին կխոսենք հետագայում:

5. ա) $(x - 8,59) = 17,94 : 6$
 $x - 8,59 = 2,99$
 $x = 11,58$

բ) $19x = 19,19$
 $x = 1,01$

գ) $12x = 24,72$
 $x = 2,06$

$$\eta) 2x=2,18$$

$$x=1,09$$

$$\xi) 1+3x=50,86$$

$$3x=49,86$$

$$x=16,62$$

$$\zeta) 2x-0,4=6,95$$

$$2x=7,35$$

$$x=3,675$$

$$6. \text{ ա) } 14,18+0,52=14,7$$

$$\text{բ) } 26,10+6=32,1$$

$$\text{գ) } 0,084+0,08=0,164$$

$$\eta) 2,08-0,0405=2,0395$$

$$11. 1) 19,65:12=1,6375$$

$$2) 16,016:4=4,004$$

$$3) \begin{array}{r} + 1,6375 \\ 4,004 \\ \hline 5,6415 \end{array}$$

$$4) 0,873:30=0,0291$$

$$5) 31:16=1,9375$$

$$6) 0,0291+1,9375=1,9666$$

$$7) \begin{array}{r} - 5,6415 \\ 1,9666 \\ \hline 3,6749 \end{array}$$

15. ա) $12 \cdot 13 \cdot 14 \cdot 15$ բաժանվում է 5-ի ուրեմն մնացորդը կազմում է՝ 3;

բ) $2 \cdot 3 \cdot 4 \cdot 5 \cdot 6 \cdot 7$ բաժանվում է 21-ի, ուրեմն մնացորդը կազմում է՝ 11;

գ) մնացորդը կազմում է՝ 17;

դ) մնացորդը կազմում է՝ 2:

§9. Տասնորդական կոտորակի բաժանումը

Հիշեցնենք աշակերտներին, որ տասնորդական կոտորակի համարիչը և հայտարարը, այսինքն՝ բաժանելին և բաժանարարը կարող ենք բազմապատկել միևնույն թվով, դրանով կոտորակը՝ այսինքն քանորդը չի փոխվի: Այստեղից ելնելով եզրակացություն ենք անում, որ տասնորդական կոտորակի բաժանումը կարող ենք փոխել բնական թվի բաժանումով:

$$7. \text{ ա) } 3,8x=38,38 \quad \text{բ) } 36,2$$

$$x=10,1$$

8. ա) նվազում է բ) աճում է գ) աճում է դ) նվազում է ե) չի փոխվի

14. $100:0,4=250$; կլինի 0,4 մ երկարության 250 հատվածը: Անհրաժեշտ է 251 կտոր

$$17. \frac{12}{4} - \frac{12}{6} = 3 - 2 = 1 (\text{ժամ}) = 60 \text{ րոպե:}$$

$$18. 1 \text{ բանկայում} - \frac{8}{12} : \frac{2}{3} \text{ Լ.} \quad 6 \text{ բանկայում} - \frac{2}{3} \cdot 6 = 4 \text{ Լ.}$$

20. Պարզ է, որ հազարավորների թվանշանը չի փոխվել, ուրեմն փոխվել է տասնավորների թվանշանը: Հնարավոր թվերն են՝ 16061 կամ 16161 (16161 փաստացիորեն անհնար է ոչ սպորտային ավտոմեքենաների համար, հնարավոր է նաև քննարկել այս տարբերակը)

16061-ի դեպքում արագությունը կազմում է՝ 55 կմ/ժամ;

16161-ի դեպքում – 105 կմ/ժամ:

§10. Ուղղանկյուն զուգահեռանիստ, ծավալ

Հասկանալի դարձնելու համար ներմուծենք ծավալի միավոր: Աշակերտներին տանք ուղղանկյուն զուգահեռանիստի և խորանարդի ծավալների բանաձևերը: Քննարկենք ծավալի չափման միավորների արտահայտումը այլ չափման միավորով: Ձևակերպենք, ինչպես պատկերի մակերեսը (իր մասերի մակերեսների գումարն է), այդպես էլ ցանկացած մարմնի ծավալը (մարմինը կազմող մասերի ծավալների գումարն է): Աշակերտը տրված բացատրությամբ պետք է կարողանա հաշվել խորանարդի և ուղղանկյուն զուգահեռանիստի ծավալները, պետք է իմանա ծավալի միավորների կապը և պետք է կարողանա մեկը արտահայտել մյուսով:

6. $72:(6 \cdot 4)=3$ (մ).

8. $1,2 \cdot 1,2 \cdot 6=8,64$ (մ³).

9. $260000:(50 \cdot 65)=80$ (սմ),
Պատասխան. Ակվարիումը կլցվի:

11. ա) ընդամենը 7 կտոր;
բ) փոքր կտորի ծավալը $(12 \cdot 6 \cdot 3):24=9$ (սմ³).
Մեղրով լի ամանի կշիռը 7 կգ է, մեղրով կիսատ լցված ամանինը՝ 4 կգ;

17. ա) Յուրաքանչյուր նիստի վրա կլինի այդպիսի 16 խորանարդ, այսինքն՝ ընդհանուր՝ $16 \cdot 6=96$:

բ) սրանք կողմերին կից խորանարդներն են, միայն խորանարդի գագաթներում գտվողները չէ, յուրաքանչյուր կողմի վրա՝ 4, ընդհանուր՝ $12 \cdot 4=48$:

գ) գագաթներում գտնվող՝ 8:




դ) այսպիսի խորանարդ չի լինի: Սրանք ներսում հայտնված խորանարդներն են, և ոչ թե մակերևույթի վրա: Այսպիսին է. $6^3-(96+48+8)=6^4$ առ $4^3=64$.

19. Հաջորդ երկուշաբթին զույգ-կենտությամբ է փոխարինվում, այսինքն եթե այս ամիս 3 հատ երկուշաբթի կա, ուրեմն ընդհանուր 5 երկուշաբթի կա: Սկսենք հաշվել
(2); 9; (16); 23; (30) պարզ է. այլ հնարավորություն գոյություն չունի: Ամսի 20-ը կլինի ուրբաթ:

§11. Բազմանիստերի փոփոխություններ

2.	A	Գագաթների քանակը	8	4	12	6	10
	B	Կողերի քանակը	12	6	18	9	15
	C	Նիստերի քանակը	6	4	8	5	7

3. 1) ա; գ; զ 2) բ, դ, ե



§12. Ուղղանկյուն գուգահեռանիստի մակերևույթի մակերեսը

Խմբային աշխատանքը ծառայում էր այն նպատակին, որ աշակերտները կարողանան բազմանիստի փովածքը ստեղծել և հակառակը՝ փովածքով բազմանիստ կառուցել: Փովածքը գործնականորեն բազմանիստի մակերևույթն է, հետևաբար հասկանալի է, որ բազմանիստի մակերևույթի մակերեսը փովածքի մակերեսն է:

4. ա) Ճշմարիտ է:
բ) Ճշմարիտ է, յուրաքանչյուր մասի մակերեսի մեջ է մտնում հատման մակերեսը, իսկ մեծ գուգահեռանիստի մակերևույթի մակերեսի մեջ՝ ոչ:
6. $3\frac{1}{2}$ ժամում զարթուցիչը հետ կմնա 14 րոպեով: Ժամը 12-ին զարթուցիչը ցույց կտա ժամը 2-ը; Ժամը 11-ն անց 46 րոպեին, այսինքն մինչև ժամը 12 մնում է 14 րոպե, այս 14 րոպեում հետ կմնա ևս 1 րոպեով, այսինքն ժամը 12-ը կլրանա ժամը 12-ն անց 15 րոպեին:
7. ա) $44:4+44=55$ բ) $99:9+9=20$
գ) $55+55-5-5=100$ հնարավոր է նաև այլ տարբերակներ:
8. Հարկավոր է 24 մ² պաստառ, եթե լայնությունը 0,4 մ է, անհրաժեշտ կլինի 60 մ² պաստառ

Ինքնաստուգման թեստ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ա	դ	բ	բ	ս	գ	բ	դ	բ	բ	ա

I գլխի լրացուցիչ վարժությունները հնարավորություն կտա ստուգել, թե ինչքանով կարողացանք հասնել այն նպատակին, որը նախատեսում էր նշված գլուխը. աշակերտը պետք է կարողանա գրել, կարդալ համեմատել, կլորացնել տասնորդականները, պետք է կարողանա գումարել, հանել, բազմապատկել, բաժանել, պետք է կարողանա լուծել այս գործողություններին համապատասխան խնդիրներ, պետք է իմանա, թե ինչպես է փոխվում է տասնորդականը 10-ով բազմապատկելու և 10-ի բաժանելու դեպքում: Այս գլխում քննարկեցինք ուղղանկյուն գուգահեռանիստի ծավալը և մակերևույթի

33. I

$S=77 \text{ սմ}^2$
14 սմ

 5,5 սմ² II

$S=7 \text{ սմ}^2$
5 սմ

 x $5x=7 \quad x=\frac{7}{5}=1,4 \text{ սմ}$

34. կանհի ա) 3,1-ով; բ) 2-ով; գ) 3-ով

36. Ոչ, քանի որ հնարավոր է առաջին թվի վերջին թվանշանը կամ թվանշանները լինեն «0»:

37. $c=12 \cdot 7+5$ այսինքն՝ 7-ի բաժանելու դեպքում մնացորդը 5 է

38.

	կար	վանառվեց	մնաց
I	1200 կգ	800 կգ	400 կգ
II	400 կգ	250 կգ	150 կգ

39. Ենթադրենք, Գիորգին x տարեկան է, ուրեմն $3x-17=16$; $x=11$ տարեկան

40. Գիշերվա տևողությունը նշենք x-ով: Օրվա տևողությունը կլինի $(24-x)$ ժամ
 $(24-x) - \frac{40}{60} = x$

$$2x = 24 - \frac{2}{3}; \quad 2x = \frac{70}{3}; \quad x = \frac{35}{3} \text{ ժ} = 12 \frac{1}{3} \text{ ժ} = 12 \text{ ժ } 20 \text{ ր:}$$

41. Գուրամի արագությունը x մ/ր է, Արչիլինը՝ 2x մ/ր, այս դեպքում նրանց միջև եղած 840 մետր հեռավորությունը կծածկվի արագությունների տարբերությամբ, այսինքն x մ/ր արագությամբ $840=6x$; $x=140$ մ/ր: Գուրամի արագությունը կլինի 140 մ/ր:

51. Նրանք հեռանում են միմյանցից արագությունների գումարի չափով, այսինքն 22 կմ/ժ արագությամբ:

ա) $1,3 \cdot 22=28,6$ (կմ); բ) $22 \cdot 2,5=55$ (կմ)

II գլուխ

§1. Բաժանարարներ և բազմապատիկներ

Աշակերտներին հիշեցնում ենք բաժանարարի և բազմապատիկի, բաղադրյալ և պարզ թվերի հասկացությունները: Ընդհանուր բացատրություններից հետո անվանում ենք կոնկրետ թվերի բաժանարարներ, պարզ բաժանարարներ, բազմապատիկներ: Խնդրում ենք նշել պարզ և բաղադրյալ թվերի օրինակներ: Պարբերության մեջ քննարկված խաղը շատ օգտաար է այս հասկացությունները վերհիշելու համար: Նման տեսակի խաղեր կհանդիպեն հաջորդ պարբերություններում, այդ իսկ պատճառով խնդրենք երեխաներին պատրաստել թվային սկավառակներ: Անհրաժեշտ է, որ դասարանում յուրաքանչյուր երկու երեխայի համար լինի թվային սկավառակի մեկ փաթեթ: Աշակերտները ուրախությամբ խաղում են և կոնկրետ հասկացությունների բացատրությունն էլ ինքնըստինքյան ստացվում է:

7. 23-ը պարզ է և 24-ը բաղադրյալ. ունի 24-ը:
11. 295-ի բոլոր բաժանարարների բազմապատիկը վերջանում է 5-ով (կենտ է), իսկ 250-ինը՝ 0-ով (զույգ է):
14. Միայն այն դեպքում, երբ $n=2$, բոլոր մասցած դեպքերում գումարը զույգ է:
16. $9 \cdot 15 + 8 = 143$
17. Ամենափոքրը՝ $11 \cdot 12 + 1$ Ամենամեծը՝ $11 \cdot 12 + 10$
18. 1-ից մինչև 780-ը 111 է, մինչև 200-ը՝ 28, ընդամենը՝ 83:

§2. Թվերի բաժանելիությունը 9-ի և 3-ի

Աշակերտներին հիշեցնենք բաժանելիության արդեն հայտնի նշանները: Եզրակացություն անենք թվի 3-ի և 9-ի բաժանելիության մասին: Պարբերությունում տրված է բավականին վարժություններ, սակայն պարբերության վերջում տրված զույգերով խաղը նույնպես իրենից ներկայացնում է վարժություն՝ այս թվերը մտապահելու և մասցորդով բաժանելը վերհիշելու համար: Աշակերտը պետք է կարողանա ձևակերպել բաժանելիության նշանները, այս նշանների հիման վրա, առանց բաժանելու գործընթաց իրականացնելու պետք է կարողանա պարզել, բաժանվում է, թե ոչ, տվյալ թիվը 2-ի, 3-ի, 9-ի, 10-ի, 15-ի, 18-ի: Պարզենք պարբերությունում տրված հարցը թիվը 9-ով մեծացնելու դեպքում իր թվանշանների գումարի փոփոխության վերաբերյալ, նման խնդիր քննարկված է (վարժություն 12):

5. ա) Հնարավոր է. օրինակ՝ 33:3 և 33:9; բ) եթե a թիվը բաժանվում է 9-ի, ուրեմն նրա թվերի գումարն էլ բաժանվում է 9-ի: Այսինքն, թվերի գումարը կբաժանվի 3-ի էլ, հետևաբար $a:3$
 - գ) $a:10 \Rightarrow a:5$ դ) $a:2$, այսինքն, a կենտ է և $a:10$
7. ա) ոչ; բ) ա յո: օր.՝ 555:3; գ) այո, օր.՝ $\frac{55...5}{9}$.

8. ա) այո Օր. ` 222 : 3 բ) ոչ գ) այո

9. ա) 75 7+5=12, բոլոր մասցած թվերի գումարը բաժանվում է 9-ի:

բ) 102 մասցածները բաժանվում են 5-ի,

գ) 140 մասցածները բաժանվում են 15-ի,

դ) 272 մասցածները բաժանվում են 3-ի:

11. ա) Շարքի անդամները 3-ի բազմապատիկ թվեր են: Այդ իսկ պատճառով հաջորդականության անդամ կլինի 276, բայց ոչ 715:

բ) Հաջորդականության անդամները 9-ի բազմապատիկներ են: 819 կլինի հաջորդականության անդամ իսկ 826-ը ոչ:

12. ա) Հնարավոր է, կնվազի կամ 9-ով կամ 18-ով: Օր. $892+9=901$ նվազեց 9-ով:

$$\text{բ) ոչ Օր. 1) } \begin{array}{r} + 273 \\ \quad 9 \\ \hline 282 \end{array}$$

Միավորների կարգի թիվը նվազում է 1-ով, սակայն, տասնավորներինը ավելանում է 1-ով, այսինքն գումարը չի փոխվում:

$$2) \begin{array}{r} + 294 \\ \quad 9 \\ \hline 303 \end{array}$$

Միավորների կարգի թվանշանը նվազեց 1-ով, հարյուրավորներինը ավելացավ 1-ով, իսկ տասնավորներինը նվազեց 9-ով: Գումարը նվազեց 9-ով:

$$3) \begin{array}{r} + 3994 \\ \quad 9 \\ \hline 4003 \end{array}$$

Նույն գործընթացը, ինչպիսին 2-րդ վարժությունում էր, գումարը նվազեց 18-ով:

$$4) \begin{array}{r} + 3870 \\ \quad 9 \\ \hline 3979 \end{array}$$

Գումարը մեծացավ 9-ով:

գ) ոչ:

13. ա) այո, օրինակ, 21 բ) ոչ

15. Եթե բաժանվում է 5-ի, վերջին թվերն են ` 0 կամ 5

ա) $2 * 70$ կամ

$$\begin{array}{cc} & \swarrow \searrow \\ 2070 & 2970 \end{array}$$

$$\begin{array}{c} 2 * 75 \\ \downarrow \\ 2475 \end{array}$$

բ) $5 * 10$ կամ

$$\begin{array}{c} \downarrow \\ 5310 \end{array}$$

$$\begin{array}{c} 5 * 15 \\ \downarrow \\ 5715 \end{array}$$

18. Ճշգրիտ ժամ ցույց տալուց հետո, պետք է հետ մաս 12 ժամով 12ժամ ով= $12 \cdot 60$ ր= 720 ր րոպեով: $720:2=360$ -անգամ 3 ժամ պետք է անցնի $360:3=1080$: 1080 ժամ հետո:

§3. Բնական թվի վերլուծումը պարզ արտադրիչների

Աշակերտը գիտի, թե ինչ է նշանակում արտադրիչ և պարզ արտադրիչ, հետևաբար, այն բանից հետո, ինչ կբացատրեք թե ինչ է նշանակում թիվը վերլուծել պարզ արտադրիչների և ցույց կտաք գործընթացը, աշակերտը չի դժվարանա այն գործածել կոնկրետ թվերի վրա: Քննարկեք պարբերությունում տրված 3-րդ հարցը: Եթե աշակերտը կտեսնի օրինաչափություն $1 \cdot 120 = 2 \cdot 60 = 3 \cdot 40 \dots = 10 \cdot 12$, հնարավոր է նա եզրակացնի, որ յուրաքանչյուր թիվ ունի գույգ քանակի բաժանարար: Հարցրեք. Արդյո՞ք միշտ այսպես է: Գոյություն ունի՞ թիվ, որի բաժանարարի քանակը կենտ է: Օրինակ, 25-ի բաժանարարն է 1; 5; 25. Ինչու՞ այսպես պատահեց: Ո՞ր թվերը կունենան կենտ քանակի բաժանարարներ:

3. ա) 2; 3; 5.

4. ա) 1, 2, 3, 4, 6, 9, 12, 18, 36.

5. ա) 1, 2, 5, 11, 10, 22, 55, 110.

6. Երեք: Վերցնենք նվազագույն պարզ թվերի արտադրյալը՝ $2 \cdot 3 \cdot 5 = 30$, հաջորդը պարզ թիվն է 7, այսինքն կդառնա եռանիշ:

7. $7 = 3 + 2 + 2$ $9 = 3 + 3 + 3$ $13 = 5 + 5 + 3$ $31 = 3 + 5 + 23$ $71 = 3 + 7 + 61$

9. ա) $39 = 3 \cdot 13$ (ոչ); բ) $63 = 9 \cdot 7$ (այո); գ) $33 = 3 \cdot 11$ (ոչ).

10. Պարզ թվեր են 2, 3, 5, 7, 9, 11, 13, 17, 19, ... ընտրեք այնպես, որ արտադրյալը լինի հնգանիշ:

12. Հաջորդական չորս բնական թվում երկուսը գույգ են, երկուսը՝ կենտ, այսինքն գումարը գույգ է և պարզ չի կարող լինել:

14. ա) 9; բ) 90; գ) 900; դ) $9 \underbrace{00 \dots 0}_{n-1}$

15. Ամենամեծ երկնիշ թիվն է 99:

ա) $\frac{99}{3} = 33$ թիվն է 1-ից մինչև 99-ը, այստեղից միանիշ է՝ 3, այսինքն 30:

բ) $\frac{99}{5} = 19(4)$ 1-ից մինչև 99-ը կա 5-ի բազմապատիկ 19 թիվ: Այստեղից 1 միանիշ է այսինքն $19 - 1 = 18$:

գ) $99 = 14(1)$ $14 - 1 = 13$ թիվ է:

16. 1, 2... 51, 52... 227

1-ից մինչև 227-ը 5-ի բազմապատիկ կա $227 = 45(2)$. 45 թիվ

1-ից մինչև 51-ը 10; այսինքն 52-ից մինչև 227-ը կլինի 35.

18.	Դ.Մ.	17,2 կմ/ժ	3 ժ	51,6 կմ
	Դ. Ս .	12,8 կմ/ժ	4 ժ	51,2 կմ

կանցնի 102,8կմ.

Խնդիր անկախ հետազոտության համար

1. $28 = 1; 2; 4; 7; 14; 28$

$36 = 1; 2; 3; 4; 6; 9; 12; 18; 36$



Եթե թիվը որևէ բնական թվի քառակուսի է, նրա բաժանարարների քանակը կենտ է: Այլ դեպքում՝ գույգ:

2. ա) 25. 49. բ) 121. 13². 17². 19². 23². 29². 31².

§4. Ամենամեծ ընդհանուր բաժանարար

Ամենամեծ ընդհանուր բաժանարար տերմինը աշակերտների համար հեշտ կլինի ըմբռնել այնքանով, որքանով նրանք գիտեն, թե ինչ է բաժանարարը և հասկանում են, թե ինչ է նշանակում «ամենամեծ» բառը: Այժմ գլավորն այն է, որ նրանց կարողանանք տերմինը ճիշտ հասկացնել, ինչպես պետք է գտնենք երկու կամ փոքր քանի թվի համար ամենամեծ ընդհանուր բաժանարարը: Տանք որոնման ալգորիթմը և պարապենք համապատասխան օրինակների վրա:

Աշակերտներին կարող ենք առաջարկել 8-րդ, 12-րդ խնդիրներին համապատասխան բովանդակության խնդիրներ: Քննարկել 5-րդ, 6-րդ, 14-րդ վարժությունները: Կրկին առաջարկում ենք խաղ նույն թվային քարտերով:

6. b-ն բաժանվում է a-ի:
9. 16-ի և 20-ի բաժանարարներն են (1-ից տարբերվող) 2; 4: (ընդամենը՝ 2 տարբերակ)
1) 2 խումբ; 2) 4 խումբ
10. 33-ի և 22-ի ընդհանուր բաժանարարն է 11 (1-ից տարբերվող). Կկազմվի 11
խումբ: Խմբում 3 տղամարդ և 2 կին կա:
11. Ամենամեծ ընդհանուր բաժանարար (80; 64)=16: 16 նվեր
12. 3 տուփ
13. 145-ի և 87-ի ընդհանուր բաժանարարն է 29:29 ծաղկեփունջ, յուրաքանչյուրի մեջ 5
վարդ և 3 մեխակ:
14. Ամենամեծ ընդհանուր բաժանարարը (12;15)=3, քառակուսու կողմը 3սմ է,
կստանանք (12:3)·(15:3)=20 քառակուսի:
16. $ab=cd$ նշանակում է $ab : c$, քանի որ c պարզ թիվ է, հետևաբար կամ $a : c$ կամ
 $b : c$, սակայն ստացանք կամ a կամ b պարզ թվեր չեն, ինչը հակասում է պայմանին:
Այսինքն՝ այսպիսի չորս թիվ գոյություն չունի:

§5. Բնական թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը

Ամենամեծ ընդհանուր բաժանարար տերմինի նման ամենափոքր ընդհանուր բազմապատիկ տերմինը նույնպես աշակերտների համար հասկանալի կլինի, քանի որ նրանց համար բազմապատիկի և ամենափոքրի հասկացությունն արդեն պարզ է: Գլխավորն այն է, որ սովորեն ամենափոքր ընդհանուր բազմապատիկը գտնելու կարգը և կարողանան այն օգտագործել համապատասխան խնդիրներում:

$$\begin{array}{l}
 6. \quad \text{է) } \begin{array}{r|l} 14 & 2 \\ 7 & \underline{7} \\ 1 & \end{array} \quad \begin{array}{r|l} 28 & 2 \\ 14 & 2 \\ 7 & \underline{7} \\ 1 & \end{array} \quad \begin{array}{r|l} 35 & 5 \\ 7 & \underline{7} \\ 1 & \end{array} \quad \begin{array}{l} \text{ամենափոքր. ընդ. բազ.} \\ (14;28;35)=5 \cdot 7 \cdot 2 \cdot 2=140 \end{array}
 \end{array}$$

7. Փոխադարձ պարզ թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը նրանց արտադրյալն է:

8. $a:b$

10. ab

12. Հետևություն. (ամենափոքր ընդ.բազ.($m;n$))·(ամենամեծ ընդ. բաժանարար ($m;n$))= $m \cdot n$

$$36 = \underbrace{(2 \cdot 2 \cdot 3 \cdot 3)}_{\text{ամենափոքր ընդ.բազ.}} = 2 \cdot 2 \cdot 3 \cdot 3 \cdot 5$$

$$30 = \underbrace{(2 \cdot 3)}_{\text{ամենամեծ ընդ. բաժ.}} \cdot 5 = 2 \cdot 2 \cdot 3 \cdot 3 \cdot \underbrace{5 \cdot 2 \cdot 3}$$

↑
ամենամեծ ընդ. բաժ. = $2 \cdot 3$

14. ամենափոքր ընդ.բազ. $(3;4)=12$ (կգ); առավելագույնը $12 \cdot 8=96$ (կգ).

15. ամենափոքր ընդ.բազ. $(30;40)=120$; $120 \text{ ր}=2\text{ժ}$

17. ամենափոքր ընդ.բազ. $(8;6)=24$; 3 սարդ և 4 մրջյուն.

18. այս թիվն է ամենափոքր ընդ.բազ. $(3;4;5;6;7)+1=421$.

20. Քառակուսու մակերեսն է 36 , եթե կտրենք չորս քառակուսի, յուրաքանչյուրի մակերեսը կլինի 9 , այսինքն կողի երկարությունը՝ 3 :

21. Նատո, Լաշա, Մարիկա, Նիկա

§6. Լուծենք խնդիրները

Աշակերտներին ծանոթացնենք ծառածև դիագրամ կառուցելու նմուշներին: Ցանկալի է, որ աշակերտներին ցույց տանք տարբերակները հաշվելու տարբեր մեթոդներ:

1. Քանի որ թիվը եռանիշ է, թվանշանները գրելու համար ունենք 3 տեղ:

Դնենք երեք կետ: • • •

Առաջին տեղի համար ընտրում ենք 4 թվից, այսինքն ունենք 4 տարբերակ.

④ • • •

Քանի որ թվանշանները կրկնելը արգելված չէ, հետևաբար II տեղն էլ ունի 4 տարբերակ. Նույնը III տեղը:

այսինքն $\begin{matrix} \textcircled{4} & \textcircled{4} & \textcircled{4} \\ \bullet & \bullet & \bullet \end{matrix}$ $4 \cdot 4 \cdot 4 = 64$

բ) Նշենք երեք կետ $\bullet \bullet \bullet$. Առաջին տեղում չեն կարողանա 0 գրել, այսինքն ունենք 3 տարբերակ:

3 տարբերակ $\begin{matrix} \textcircled{3} & \textcircled{4} & \textcircled{4} \\ \bullet & \bullet & \bullet \end{matrix}$ $3 \cdot 4 \cdot 4 = 48$

գ) $\begin{matrix} \textcircled{4} & \textcircled{5} & \textcircled{5} \\ \bullet & \bullet & \bullet \end{matrix}$ $4 \cdot 5 \cdot 5 = 100$

2. 7-ով ավարտվող 10 թիվ՝ 10 (յուրաքանչյուր տասնյակում մեկ): 7-ի բազմապատիկն է $\frac{100}{7} = 14$, ընդամենը՝ $10 + 14 = 24$, բայց այս շարքին են պատկանում նաև այն թվերը, որոնք բավարարում են երկու պայմաններն էլ, սրանք են. 7, 77 այսինքն ստացանք $24 - 2 = 22$ թիվը:

3. $\bullet \bullet \bullet \bullet \boxed{5}$ վերջին թվանշանը անպայման 5-ն է: Թվերը:

1, 3, 7, 9 պետք է գրվեն առաջին 4 տեղերում: Թվանշանները չեն կրկնվում

$\begin{matrix} \textcircled{4} & \textcircled{3} & \textcircled{2} & 1 & \boxed{5} \\ \bullet & \bullet & \bullet & \bullet & \bullet \end{matrix}$

Տարբերակների քանակն է $24 = 4 \cdot 3 \cdot 2 \cdot 1$

4. Յուրաքանչյուր մեխի վրա կապած է 3 թել: Կա 4 հատ մեխ, ունենք $3 \cdot 4 = 12$ ծայր: Մեկ թելն ունի 2 ծայր, այսինքն կլինի 6 թել:

5. Յուրաքանչյուր երեխա բերեց 23 նկար (իրենը՝ ուրիշին տալու համար): $24 \cdot 23 = 552$ (նկար).

6. $12 \cdot 11 = 132$.

7. Կա տասը տարբերակ: Կարող եք ցույց տալ, կամ գրել:

8. Այս թվերն են. 208, 280, 802, 820

